# ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՀԵՆՐԻԿ ՍՎԱՋՅԱՆ

*Աղվանից աշխարհը գտնվում էր Մեծ Հայքից արևելք, նրա անմիջական հարևանությամբ և զբաղեցնում էր Կուր գետից հյուսիս ընկած և մինչև Կովկասյան Գլխավոր լեռնաշղթա հասնող տարածքը: Այդտեղ էլ մ. թ. ա. I դարի սկզբներին կազմավորվում է պետություն, որին հայերն անվանում են «Աղուանք», հռոմայեցիները՝ «Ալբանիա», վրացիները՝ «Ռանի» կամ «Հերեթի», իսկ ասորիներն ու պարսիկները՝ «Առան», «Առ-Ռան» կամ «Ալ-Ռան»: Գիտական գրականության մեջ այն Բալկանյան Ալբանիայից տարբերելու համար ընդունված է կոչել «Կովկասյան Ալբանիա»:*

*Հենվելով ժողովրդական ավանդության վրա՝ հայերեն «Աղուանք» եզրույթը ծագել է Հայոց Արևելից կողմերում, հայկական միջավայրում, զուտ հայերեն «աղու» («համեղ, քաղցր, անոյշ»[1]) բառի հիմքի վրա: Սա դեռևս V դարում փաստել է պատմահայր Մովսես Խորենացին: Պատմելով Հայոց Վաղարշակ թագավորի (Տրդատ Ա-ի, 66–88 թթ.) պետական շինարարական գործունեության մասին, պատմահայրը գրում է, որ թագավորը Հայկի սերունդներից Սիսակ անունով նահապետին «յարևելից կողմանէ, զեզերբ հայկական խօսիցս» որպես ժառանգություն տալիս է «զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա»[2]: Երկրանվան առաջացումը «աղու» բառից բնութագրում է երկիրն ամբողջությամբ, իբրև «հաճելի, դուրեկան», բնակլիմայական առումով՝ բարե-*

---

[1] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երևան, 1979, էջ 42:*

[2] *Մ ո վ ս ե ս  Խ ո ր ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 112–113 (այսուհետև՝ Խ ո ր ե ն ա ց ի): Նույնը կրկնելով VII դարի հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին երկրամասի անունը բխեցնում է Սիսակի ժառանգներից ավանդական Առան անունով նախնու «աղու» բնավորությունից (տե՛ս Մ ո վ ս է ս  Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 8 (այսուհետև՝ Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի):*

*բեր կամ արգասաբեր երկիր*[3]*, մի առանձնահատկություն, որ բազմիցս նշել են անտիկ, վաղ միջնադարյան հայ և արաբ պատմիչներն ու աշխարհագետները*[4]*:*

*Ծագելով Հայոց Արևելից կողմերում՝ հայերեն «Աղուանք» եզրույթը հայ-հռոմեական հարաբերությունների ժամանակ հայերի միջոցով փոխանցվել է հռոմեացիներին և նրանք էլ իրենց համար անծանոթ, օտարահունչ անվանը տալով սեփական լեզվական՝ լատինական, հնչողություն, շրջանառության մեջ են դրել «Ալբանիա» ձևով, տպավորություն թողնելով, թե երկրի անվանադիրները եղել են իրենք:*

*«Առան» (Ռանի, Առ-Ռան, Ալ-Ռան) տեղանվան ստուգաբանությամբ առաջինը զբաղվել է Ն. Մառը՝ դիմելով այժմյան դաղստանյան լեզուներին: Ըստ նրա, դաղստանյան ցեղերից մեկի՝ լաքերի, լեզվում պահպանվել է «առ» բառը «դաշտավայր», իսկ մի ուրիշի՝ խնալողների, լեզվում «ջերմ», «տաք» նշանակությամբ և երկուսի զուգադրությամբ գործածվել որպես ջերմ ու տաք «հարթավայր»՝ «ձմեռային արոտավայր» հասկացությամբ, ինչն իր իմաստով շատ էլ չի տարբերվում նրա հայերեն անվանաձևի բովանդակությունից:*

*Այսպիսով, նշված անվանումները տրվել են խնդրո առարկա երկրին՝ ելնելով նրա բնաշխարհի առանձնահատկությունից և, լինելով նկարագրական բնույթի, էթնիկական ծագում չունեն:*

## ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՇՈՒՐՋ

*Աղվանից աշխարհը, ըստ Ստրաբոնի, բնակեցված էր 26 տարատեսակ ու տարալեզու, սեփական թագավորներով (ցեղային առաջնորդներով) կառավարվող, հավատալիքներով ու կենցաղավարությամբ մեկը մյուսից կատարելապես զանազանվող ցեղերով՝, որոնց, սակայն, անտիկ հեղինակներն առանց տարբերակման, բոլորին անխտիր, ընդհանուր, հավաքական անվամբ կոչում են «աղվան», եզրույթ, որը, սակայն, չի կարող այսպիսի խառնիճաղանջ, անհայտ ծագմամբ ու անվանումներով ցեղային կազմ ունեցող երկրում ապրողների ինքնանվանումը լինել: Ուստի հիմք ընդունելով երկրին տրվող «Աղուանք» անվանումը, ավելի իրական ենք գտնում տվյալ երկրի բնակիչներին կոչել «աղվանացիներ»: Վերջիններիս ինքնանվանման անհայտության պայմաններում սա է միակ ճիշտ անվանումը:*

---

[3] Г. Свазян. История страны Алуанк (с древнейших времен по VIII в).– Автореферат дисс. на соиск. уч. ст. докт. ист. н. Ереван, 1991, с. 12; *Նույնի՝ Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից –* VIII *դարը ներառյալ), Երևան, 2006, էջ 51–52:*

[4] The Geography of Strabo, XI, IV, 2,3; *Կաղանկատվացի, էջ 9,* Сведения арабских источников IX и X вв. до Р. Х. о Кавказе, Армении, Азербайджане.– Сборник материалов для описания местностей и племен Кавказа (*այսուհետև՝* СМОМПК), вып. 29. Тифлис, 1901, с. 7, 9, вып. 38. Тифлис, 1908, с. 14, 15, 25, 92.

[5] Strabo, XI, IV, 6.

*Աղվանական ցեղերի մեջ տարբերվում են հիմնականում երկու էթնիկական բաղադրիչներ՝ տեղական, որոնք, ըստ ուսումնասիրողների, պատկանում են իբերո-կովկասյան լեզվաընտանիքին և դրսեկ, որոնք իրենց հերթին բնորոշվել են իբրև իրանալեզու-սկյութական ցեղեր[6]: Եվ հենց այս ցեղերն էլ սկսում են աղվանական ժողովրդի կազմավորման գործընթացը, ինչն էլ երկրի՝ տարբեր աշխարհագրական ու տնտեսական շրջանների բաժանվածության, մինչև վերջ էլ անհաղթահարելի մնացած բազմացեղայնության, ցեղերի՝ միմյանց հետ փոխհարաբերությունների մեջ մտնելու դժվարությունների[7], ամենքին հասկանալի մեկ ընդհանուր լեզվի բացակայության և սոցիալ-քաղաքական մի շարք այլ գործոնների հետևանքով, իր ավարտին չի հասնում: Դրանով է նաև Աղվանքը տարբերվում էթնիկական մի ընդհանրության հասած հարևաններ Մեծ Հայքից ու Վիրքից: Վերոհիշյալ որոշիչներն էլ պայմանավորում են, որ աղվանացիներն աստիճանաբար ձուլվեն ու VIII դարից հետո անհետանան պատմության թատերաբեմից: Նրանց էթնիկական ձուլման գործընթացն այնքան արագ է տեղի ունենում, որ XI դարի երկրորդ կեսին տարածաշրջան թափանցած թուրք-սելջուկներն իրենց մեջ ձուլում էին ոչ թե աղվանական, այլ վաղուց ուծացված ցեղերի: Հետևաբար, աղվանացիները չեն կարող համարվել ներկայիս «Ադրբեջան» շինծու անվամբ երկրում դարեր հետո բնակություն հաստատած կովկասյան թաթարների նախնիներ, ինչպես փորձում են ներկայացնել այդ երկրի համար պատմություն հորինողները, միաժամանակ համերկրացիներին անվանելով աղվանացիների նյութական և հոգևոր մշակույթի կրողներ: Այդպիսիք, նրանց համար, կարող են լինել հիշյալ օղուզական ցեղերի հետնորդները: Դա հաստատվում է նաև նրանով, որ այսօրվա ադրբեջանցիները՝ պատկանում են թյուրքական լեզուների օղուզական խմբին[8], մինչդեռ աղվանացիները իբերո-կովկասյան լեզվաընտանիքի ճյուղերից էին:*

## ԱՂՎԱՆԻՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԻ ՄԱՍԻՆ

*Ինչպես նշվեց, Աղվանից պետությունը, կազմավորվել է մ. թ. ա. I դարում և նույն դարի 66–65 թթ. հռոմեացի զորավար Գնեոս Պոմպեոսը արդեն կռիվ էր տալիս նոր ձևավորված պետության թագավոր Օրոյսեսի դեմ և հաղթելով, նրա տերությունը*

---

[6] А. И. Болтунова. Племена, обитавшие на территории Азербайджана в I тысячелетии до н. э.– Очерки истории СССР. Первобытнообщинный строй и древнейшие государства на территории СССР. М., 1956, с. 224, 225; А. П. Новосельцев, В. Т. Пашуто, Л. В. Черепнин. Пути развития феодализма. М., 1972, с. 39.

[7] Strabo, XI, IV, 6.

[8] *Մանրամասները տե՛ս* В. В. Бартольд. Краткий обзор истории Азербайджана.– Сочинения, т. II, ч. I. М., 1963, с. 778; *Նույնի.* Двенадцать лекций по истории турецких народов Средней Азии.– Сочинения, т. V. М., 1968, с. 96.

*դասում է «Հռոմին բարեկամ ու դաշնակից» երկրների շարքում: Նորանվաճ տեղամասերը հռոմեացիներին սկսում է հետաքրքրել իր բոլոր կողմերով, այդ թվում՝ տարածքային ընդգրկումներով: Վերջիններիս շուրջ առանձնապես հստակ ու որոշակի խոսել են հին աշխարհի նշանավոր աշխարհագետներ Ստրաբոնը (մ. թ. ա. I – մ. թ. I դդ.), Պլինիոս Ավագը (մ. թ. I դ.) և Կլավդիոս Պտղոմեոսը (մ. թ. II դ.): Նրանց հաղորդումները լրացնում և հաստատում են Պլուտարքոսը, Տակիտոսը (մ. թ. I – II դդ.), Ապպիանոսը (մ. թ. II դ.), Դիոն Կասսիոսը (մ. թ. II – III դդ.) և բոլոր նրանք, ովքեր առհասարակ պատմում են Պոմպեոսի կովկասյան արշավանքների մասին: Նրանց տվյալների համաձայն՝ Աղվանից պետության սահմանները հյուսիսում հասնում էին մինչև Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի հարավային՝ Կերաունյան (Շանթային) ճյուղը և նրա շարունակությունը կազմող Սոանա (Սումգայիթ) գետը, արևելքում՝ Կասպից ծովը, արևմուտքում՝ Ալազան, իսկ հարավում Կուր գետերը: Մայրաքաղաքն էր Կապաղակը (Cabalaca)՝ ներկայիս Ադրբեջանի Կուտկաշենի շրջանի Չուխուր-Կաբալա գյուղի մոտ[9]:*

*Նշված սահմաններում պարփակված երկիրը հունա-հռոմեական հեղինակներն անվանել են «Ալբանիա» և որպես տեղանուն գործածել միմիայն անդրկովկասյան սույն պետական միավորի համար:*

*Աղվանքի վերաբերյալ նույն քաղաքական սահմաններն են ցույց տալիս նաև հայկական աղբյուրները, և հատկապես, «Աշխարհացույց»-ը: Այստեղ հայ աշխարհագրագետը մեզ հետաքրքրող երկիրն անվանում է «Բուն Աղուանք» և տեղադրում «ընդ մէջս … մեծի գետոյս Կուրայ և Կովկաս լերինն»[10], ինչը համապատասխանում է անտիկ հեղինակների ճանաչած «Ալբանիա» երկրի աշխարհագրական եզրագծերին: «Ալբանիա» և «Բուն Աղուանք» եզրույթները, որպես մատնանշված սահմաններով երկրի անվանումներ, կիրառվել են Աղվանից պետության գոյության ողջ ընթացքում՝ կազմավորումից մինչև վերացումը կամ, ժամանակագրական առումով, մ. թ. ա. I դարի սկզբներից մինչև մ. թ. Vդարի կեսերը: Տեղին է այստեղ արձանագրել, որ այս ամբողջ ժամանակահատվածում Ալբանիա-Աղուանքի հարավային սահմանն անցել է Կուր գետով և նրան բաժանել Մեծ Հայքից:*

*Ստրաբոնի հաղորդմամբ՝ «ալբանները … ապրում են իբերների ու Կասպից ծովի միջև. արևելքում նրանց երկիրը մոտենում է ծովին, իսկ արևմուտքում սահմանակցում իբերների հետ: Ինչ վերաբերվում է մյուս կողմերին, ապա հյուսիսայինը շրջապատված է Կովկասյան լեռներով (որովհետև այդ լեռները բարձրանում են հարթության վրա և հատկապես այն մասը, որը ծովին մոտ է, Կերաունյան լեռներ), իսկ*

---

[9] *Հ. Ս. Սվազյան. Աղվանից աշխարհի պատմություն…, էջ 54–79:*

[10] *Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց (այսուհետև՝ Աշխարհացոյց), Վենետիկ, 1881, էջ 29:*

*վերջին կողմը կազմում է նրա հետ սահմանակցող Հայաստանը»*[11]*, Հայաստանն էլ ըստ նույն հեղինակի, սահմանակցում էր Աղվանքին այն հատվածով, ուր «Կասպից ծով են թափվում Կուր և Արաքս գետերը»*[12]*: Այնուհետև հույն աշխարհագետը խոսելով հայոց Ուտիք նահանգի Շակաշեն գավառի մասին, հայտնում է, որ այն հարում է Աղվանքին ու Կուր գետին: «(Արաքսի.–* Հ. U.*) հարթությունից այն կողմ,– գրում է նա,– տարածված է նույնպես Ալբանիայի ու Կուր գետի հետ սահմանակցող Շակաշենը»*[13]*: Հայկական այս մարզի*[14] *համար Կուրը սահման ընդունելով, Ստրաբոնը, ըստ էության, գետը ճանաչում է նաև Մեծ Հայքի ու Աղվանքի միջև ընկած սահմանագիծ: Պիլինոս Ավագն էլ, իր հերթին, գրում է, որ «Կուրից սկսած ողջ հարթությունը զբաղեցնում է ալբանների ցեղը»*[15]*, ապա թվարկելով Կասպից ծովի արևմտյան ափին բնակվող ցեղերին, ավելացնում, որ նրանք «տեղաբաշխված լինելով Կովկասյան լեռներում, հասնում են, ինչպես ասվել է, մինչև Հայաստանի ու Իբերիայի սահմանը հանդիսացող Կուր գետը»*[16] *՝ դրանով մեկ անգամ ևս փաստելով, որ Աղվանքի հարավային եզրագիծը Կուր գետն էր: Համանման վկայություններ ունի և Կլավդիոս Պտղոմեոսը: Նրա մատուցմամբ՝ «Կուրը, հոսելով Իբերիայի ու Ալբանիայի երկարությամբ, նրանց բաժանում է Հայաստանից»*[17]*, «Մեծ Հայքը հյուսիսից սահմանակցում է Կոլխիդայի մի մասի, Իբերիայի ու Ալբանիայի հետ վերոհիշյալ գծով, որ անցնում է Կուր գետով»*[18]*, հայկական մարզերը շրջափակված են «Եփրատ, Կուր և Արաքս գետերով»*[19] *և այլն:*

*Կուրը, իբրև երկու երկրները միմյանցից բաժանող գետ են դիտում նաև այլ անտիկ հեղինակներ: Նրանցից, մասնավորապես, Պլուտարքոսը տեղեկացնում է, որ աղվանացիները 66–65 թթ. ձմռանը Պոմպեոսի վրա հարձակվելիս անցել են Կուր գետը*[20]*: Նրանց դեմ կռվելիս երկու անգամ նույն կերպ է վարվել, այսինքն՝ Կուր գետն է անցել և ինքը՝ Պոմպեոսը*[21]*: Ի դեպ, հենց Կուր գետն են ցցապատնեշով փակել աղվանացիները՝ ցանկանալով խոչընդոտել հռոմեացիների մուտքը Աղվանք*[22]*:*

---

[11] S t r a b o, XI, IV, 1.

[12] *Նույն տեղում, XI, 1, 5:*

[13] *Նույն տեղում, XI, XIV, 4:*

[14] *Տե՛ս ստորև:*

[15] P l i n y. Nat. Hist., VI, 29.

[16] *Նույն տեղում, VI, 39:*

[17] Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, собрал и издал с русским переводом В. В. Латышев, т. I. СПб., 1890, с. 242.

[18] *Նույն տեղում, էջ 243:*

[19] *Նույն տեղում, էջ 244:*

[20] Plutarch's Lives, Pompe*y*, XXXIV.

[21] *Նույն տեղում, XXXV:*

[22] *Նույն տեղում:*

*Կուրի սահմանագիծ լինելու հարցում վերոհիշյալ հեղինակների հետ համակարծիք է անտիկ շրջանի մեկ այլ պատմիչ՝ Դիոն Կասսիոսը: Նա հիշում է Կուրից հյուսիս ապրող աղվանացիներին, որոնց Պոմպեոսը ջախջախում է Կուրի գետանցի մոտ*[23] *և պատմում, որ աղվանացիներն իրենց հարձակմամբ շարժել էին Պոմպեոսի զայրույթը և վերջինս թեև «բուռն կերպով ցանկանում էր ներխուժել* նրանց երկիրը *(ընդգծումը մերն է.– Հ.* U.*)՝ վրեժ լուծելու համար, բայց ձմեռվա պատճառով ուրախությամբ հետաձգեց պատերազմը»*[24] *ու մնաց ձմեռելու «Անահտական երկրում և Կյուռնոս գետի մոտ»*[25]*: Երկիրը, ուր մնում է ձմեռելու Պոմպեոսը, և որը Անահիտ աստվածուհու պատվին է կոչվել «Անահտական», Հայաստանի մարզերից էր*[26]*, ինչն էլ, արդեն, փաստում է, որ անտիկ հեղինակի համար «նրանց (աղվանացիների.– Հ.* U.*) երկիրը գտնվում էր Մեծ Հայքի սահմաններից դուրս՝ Կուրի մյուս կողմում:*

*Հունա-հռոմեական հեղինակներից հետո Բուն Աղվանքի սահմանների մասին խոսում են հայ պատմիչներն ու աշխարհագրագետները: Նրանցից առաջինը Փավստոս Բուզանդն է, ով պատմելով IV դարի 30-ական թվականներին Մասքթաց թագավոր հորջորջվող Սանեսանի գլխավորությամբ հյուսիսային վաչկատուն ցեղերի Հայաստան արշավելու մասին, ասում է, որ նրանք, անցնելով Կուր գետը, անմիջապես հայտնվում են Հայաստանում: «Եկն անց (Սանեսանը.– Հ.* U.*),– գրում է Բուզանդը,– ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից զերկիրն հայոց աշխարհին»*[27]*: Մի ուրիշ անգամ, արդեն նույն դարի 60–70-ական թվականներին հայ-պարսկական կռիվների ետժամանակյա շրջանի իրադարձությունների մասին խոսելիս, նա գրում է, որ հայերը, սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ, դուրս գալով Աղվանքի դեմ, ետ են գրավում Հայաստանից նրա խլած գավառները* «եւ զԿուր գետ, որպէս և յառաջն լեալ էր ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին»[28]*:*

*«Աշխարհացույցն» էլ, հիշեցնենք, Աղվանքը տեղադրում էր Կուր գետի և Կովկաս լեռան միջև*[29]*: Բյուզանդի մի այլ վկայությամբ ևս Աղվանքը տարածվում էր* «ելից

---

[23] *Դիոն Կասսիոս Կոկկեյանոս. Հռոմեական պատմություն.– Հովսեպոս Փլավիոս. Դիոն Կասսիոս, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 142–143 (XXXVI, 54, 1):*

[24] *Նույն տեղում, էջ 143:*

[25] *Նույն տեղում, էջ 142 (XXXVI, 53, 5):*

[26] *Նույն տեղում, էջ 137 (XXXVI, 48, 1):*

[27] *Փավստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Բուզանդ), Երևան, 1987, էջ 28:*

[29] *Աշխարհացույց, էջ 29:*

կալով Վրաց առ երի Սարմատիոյ առ Կաւկասաւ մինչև ցԿասբից ծովն և ցՀայոց սահմանսն առ Կուր գետով» *(ընդգծումը մերն է.– Հ. Ս.)*[30]*:*

*Այսպիսով, անտիկ և հայ պատմիչների ու աշխարհագետների հաղորդումները բերում են այն աներկբա համոզման, որ մ. թ. ա. I – մ. թ. V դարերի Ալբանիա–Աղվանքի և Մեծ Հայքի միջև հարավային սահմանը եղել է Կուր գետը: Այս տեսակետն ընդունում են շատ ուսումնասիրողներ*[31]*: Ի տարբերություն այդ շատերի, ռուս պատմաբան Կ. Վ. Տրեվերը գտնում է, որ Կուրը Հայոց ու Աղվանից միջև սահմանային գետ է դարձել մ. թ. ա. II դարից*[32]*, իսկ ադրբեջանցի հեղինակ Ք. Ալիևը՝ մ. թ. II դարից*[33]*: Ըստ վերջինիս, մինչ այդ Աղվանքի հարավային սահմանն անցել է Արաքս գետով*[34]*: Բոլոր ժամանակների համար Արաքսը Աղվանքի հարավային սահման է համարում Ֆ. Մամեդովան: Առանց որևէ հիմքի, աղբյուրների հաղորդումներն հետադարձորեն տարածելով մ. թ. ա. III դարի վրա, նա գտնում է, որ Աղվանքը դեռևս նշված դարից (երբ այն իր պետականությունն անգամ չուներ) պարփակված էր Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի, Իորի ու Ալազան գետերի վերին հոսանքների, Դերբենդի ու Արաքս գետի միջև ընկած տարածքում: Ավելին, ըստ նրա, այն նույնիսկ իր ազդեցության ոլորտներն ուներ հյուսիսում մինչև Սուլակ գետ և ավելի հեռու*[35]*:*

*Մեծ Հայքի ու Աղվանքի միջև մ. թ. ա.* II *դարում Կուրը սահման համարելով, Կ. Վ. Տրեվերն այն կապում է Մեծ Հայքի «զավթողական» քաղաքականության հետ: Նրա կարծիքով դեռևս մ. թ. ա. II դարի սկզբներին Արտաշես Ա Հայոց թագավորը (189–160 թթ.), իբր, Աղվանքից խլել է նրա կազմի մեջ մտնող Ուտիք, Արցախ ու Փայտակա-*

---

[30] *Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւնք (այսուհետև՝ Մատենագրութիւնք), Վենետիկ, 1865, էջ 606:*

[31] А. Яновский. О древней Кавказской Албании.– «Журнал Министерства народного просвещения», ч. 52, 1846, с. 97; С. В. Юшков. К вопросу о границах древней Албании.– Исторические записки АН СССР, т. I. М., 1937, с. 132, 133; Абас-Кули ага Бакиханов (Кудси). Гюлистан-Ирам. Баку, 1926, с. 8; С. Т. Еремян. Атлас к книге ,История армянского народаѣ, ч. I. Ереван, 1952. *Ա. Շ. Մնացականյան. Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1965, էջ 119 և հաջ., Բ. Ա. Ուլուբաբյան. Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 30 և հաջ.,* А. П. Новосельцев. К вопросу о политической границе Армении и Кавказской Албании.– Кавказ и Византия, вып. I. Ереван, 1979, с. 10–18; Tomaschek. Albania, Albanoi, Pouli-Wissowa-Kroll, Realencyclopadie der klossishen Altertuswissenschoft, Stutgart, 1893, p. 1303–1309; А. А. Акопян. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, с. 21–27 *և էլի ուրիշներ:*

[32] К. В. Тревер. Очерки по истории и культуре Кавказской Албании ( IV в. до н. э. – VII в. н. э.). М.–Л., 1959, с. 58.

[33] К. Алиев. Кавказская Албания (I в. до н. э. – I в. н. э.). Баку, 1974, с. 122.

[35] Ф. Мамедова. Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э. – VIII в. н. э.). Баку, 1986, с. 144 и карта № I.

*բան նահանգները և Կուրը դարձրել սահման Մեծ Հայքի ու Աղվանքի միջև: Ուստի, ըստ Կ. Վ. Տրեվերի, անտիկ հեղինակների հաղորդումները, թե Կուրը սահման էր երկու երկրների միջև՝ վերաբերում են այդ ժամանակներին[36]: Այնուհետև մեկնաբանելով իր «նորույթը», նա գտնում է, որ այդ «բռնազավթված» մարզերը մինչև մ. թ. IV դարը մնացել են Հայոց կազմում և միայն դրանից հետո են միավորվել Աղվանքի հետ[37]: Ասածներն հաստատելու համար ռուս հետազոտողը վկայակոչում է Ստրաբոնի հայտնի հաղորդումը՝ շրջակա երկրներից Արտաշեսի կատարած նվաճումների մասին[38]: Բայց առնվազն հակագիտական է նրա կողմից վկայակոչել մի հաղորդում, որը նման եզրակացության համար ոչ մի հիմք չի տալիս: Ստրաբոնը հականե հանվանե թվարկելով «նվաճման» ենթարկված մարզերն ու այն երկրները, որոնցից կատարվել են դրանք, չի տալիս ո՛չ Աղվանքի և ո՛չ էլ մատնանշված նահանգներից որևէ մեկի անունները[39]: Հետևաբար, Ստրաբոնի տեղեկությունն այն հիմքը չէ, որի վրա հենվում է նա[40]: Նման տեսակետ առաջ քաշելով՝ հետազոտողն անտեսում է այն հանգամանքը, որ իր նշած ժամանակահատվածում՝ մ. թ. ա. II դարում, Աղվանքը դեռ պետականություն չուներ և, բնականաբար, Արտաշեսը չէր կարող անորոշ կազմավորումից որոշակի երկրամասեր խլել: Այնինչ, ինչպես կտեսնենք ստորև, հայ մատենագրության մեջ կան ուղղակի տվյալներ այն մասին, որ նշված նահանգներն Արտաշեսից էլ առաջ կազմել են Երվանդյան Հայաստանի անբաժանելի մասերը:*

*Աղբյուրների հաղորդումների կեղծումներով, հավելումներով կամ կամայական մեկնաբանություններով են պարուրված՝ Կուրը միայն մ. թ. II դարում Հայոց ու Աղվանից միջև սահման լինելու մասին Ք. Ալիևի «հայտնագործությունը»: Այսպես, Ստրաբոնի այն հաղորդումը, թե «Արաքսը հոսում է* մինչև *Ալբանիայի սահմանները» (ընդգծումը մերն է.– Հ. Ս.)[41], որից պարզորոշ երևում է, որ Արաքսը սոսկ մոտենում է վերջինիս սահմաններին, Ք. Ալիևը վերափոխելով, գրում է. «Արաքսը հոսում է Ալբանիայի տարածքով»[42], ցանկանալով այնպիսի տպավորություն ստեղծել, թե ըստ Ստրաբոնի, Արաքսը Աղվանքի գետերից է և եղել է Մեծ Հայքի ու Աղվանքի սահմանը, իսկ Կուրը նրանց միմյանցից բաժանող գիծ դարձել է միայն մ. թ. II դարում[43]: Նրա մտածելով, այլ ժամանակներում Կուրը սահման ճանաչողների համար*

---

[36] К. В. Т р е в е р. Очерки по истории …, с. 58.

[37] *Նույն տեղում, էջ 58, ծան. 8:*

[38] *Նույն տեղում, էջ 58:*

[39] S t r a b o, XI, XIV, 15.

[40] *Տե՛ս նաև Ա. Շ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 23:*

[41] S t r a b o, XI, XIV, 4.

[42] К. А л и е в. Кавказская Албания..., с. 114.

[43] *Նույն տեղում, էջ 122:*

*հիմք են ծառայել անտիկ հեղինակների հաղորդումների ոչ ճիշտ թարգմանությունները և ձեռնամուխ է լինում դրանցում «սխալներ» ի հայտ բերելու և «ուղղելու» գործին: Մասնավորապես, այդպիսիք նա փնտրում և գտնում է Վ. Վ. Լատիշևի թարգմանություններում: Ք. Ալիևի կարծիքով վերջինիս թարգմանությամբ Պլինիոսի տեղեկությունը, թե «Կուրից սկսած ողջ հարթությունը բնակեցրել են ալբանական ցեղերը», կտրված է ենթատեքստից և պատրանք է ստեղծում, թե, իբր, աղվանացիները բնակվել են Կուրից հետո սկսվող տարածքում[44]: Մինչդեռ, գտնում է նա, հույն աշխարհագետի հաղորդումն իր ենթատեքստով ցույց է տալիս որ, «ալբանական ու իբերական ցեղերը բնակվում էին ընդհուպ մինչև Կուրի ողջ հարթությունը»[45]: Նմանատիպ հարմարեցումներով ապահովագրելով իրեն, Ք. Ալիևն արդեն հայտարարում է. «Ստրաբոնի, Պլինիոսի ու Պտղոմեոսի տվյալները վկայում են, որ Կովկասյան Ալբանիայի տարածքը բաժանվում էր երկու մասի, Կուրից հյուսիս ընկած մարզերի ու Կուրից հարավ գտնվող և մինչև այդ Ալբանիայի կազմի մեջ մտնող մարզերի»[46]: Բայց ալիևյան մեկնաբանությունը կամայական է, իսկ եզրակացությունը՝ կանխակալ, քանի որ հակասում են իր իսկ կողմից վկայակոչած հեղինակների հաղորդումներին: Ինչ վերաբերում է Պլինիոսի երկի ռուսերեն տարբերակին, ապա վերջինիս համեմատությունը բնագրի անգլերեն թարգմանության հետ, ցույց է տալիս, որ Վ. Վ. Լատիշևը շատ էլ հարազատ է մնացել քննարկվող աշխատության բովանդակությանը[47]: Այնպես որ, սխալներ փնտրելով այնտեղ, որտեղ այդպիսիք չկան, ինքը՝ Ք. Ալիևն է ընկնում թյուրիմացության մեջ:*

*Աղբյուրների հաղորդումներին նման ձևով է մոտենում նաև Ֆ. Մամեդովան: Նա սխալ ու պատմականորեն անճիշտ է համարում Կուրի՝ Աղվանքի հարավային սահման լինելու մասին վերոհիշյալ հեղինակների տվյալները, իսկ Բուզանդի ու Շիրակացու նմանատիպ հաղորդումները՝ միտումնավոր ու պատմական իրականությանը անհամապատասխան[48]: Նրա կարծիքով, Կուրը Հայաստանի ու Աղվանքի միջև սահման է դիտվել նրա համար, որ նշված հեղինակների հաղորդումներին ուսումնասիրողները մոտեցել են անքննադատաբար, առանց դրանցում արժանահավատության վերհանման փորձի, ու, հատկապես, Խորենացու և Կաղանկատվացու տեղեկությունների լրիվ անտեսման հետևանքով[49]: Հետազոտողն ուղղակի պահանջում*

---

[44] *Նույն տեղում, էջ 88:*

[45] *Նույն տեղում:*

[46] *Նույն տեղում, էջ 121: Նման թյուր կարծիքի է նաև վրացի պատմաբան Թ. Պապուաշվիլին՝ գրելով, թե Կուր գետով Աղվանքը բաժանվում էր երկու մասի՝ ձախափնյա և աջափնյա Աղվանքի:* [Т. П а п у а ш в и л и. Вопросы истории Эрети. Тбилиси. 1970, с. 5 (на груз. яз.)].

[47] *Հմմտ.* Известия древних писателей …, т. II, с. 181; P l i n y. Natural History (All the plain from the Kur onward is occupied by the race of the Albania>), VI, 11.

[48] Ф. М а м е д о в а. Политическая история …, с. 45–46, 53, 119, 124, 145–146.

[49] *Նույն տեղում, էջ 119:*

*է չհավատալ անտիկ հեղինակներին, քանի որ «նրանց ինֆորմացիան կրում էր պատահական և հակասական բնույթ և միանգամայն ճիշտ լինել չէր կարող»[50], որ առկա հաղորդումների հիմքում ընկած են Անդրկովկասի աշխարհագրությունը վատ իմացող Էրատոսթենեսի, Պատրոկլեսի ու, մանավանդ, Պոմպեոսի կովկասյան արշավանքների մասնակիցների տեղեկությունները, «որոնց նպատակը պոնտական թագավորին հետապնդելն էր և ոչ թե Աղվանքի ուսումնասիրումը»[51]: Բայց Ֆ. Մամեդովայի մեղադրանքը մտացածին է: Աղվանքը նկարագրվել է իրազեկ մարդկանց, հիմնականում հիշյալ արշավանքների մասնակից, ռազմական ու քաղաքական գործիչ Թեոփանես Միթիլենացու օրագրերի ու հաշվետվությունների համաձայն[52], որոնք պետական-պաշտոնական զեկուցագրեր էին, վավերագրական փաստաթղթեր: Որպես այդպիսիք դրանք անհրաժեշտ չափով հավաստի տեղեկություններ էին պարունակում Աղվանքի թե՛ սահմանների և թե՛ սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի մասին, քանզի հռոմեացիներին նվաճված երկրներն ամենից առաջ հետաքրքրում էին հենց այդ առումներով:*

*Տարված լինելով անտիկ հեղինակների հաղորդումներում հակասություններ գտնելու ցանկությամբ՝ Ֆ. Մամեդովան, Ստրաբոնի բացասական վերաբերմունքն իր աղբյուրների ու, մասնավորապես, Պոսիդոնիոսի նկատմամբ[53], ներկայացնում է իբրև նրա հաղորդումների հակասականությունն ընդգծող փաստ[54]: Բայց սա գիտական մոտեցում չէ: Հույն աշխարհագետի այսպիսի վերաբերմունքն իր օգտագործած աղբյուրների նկատմամբ բարեխիղճ ուսումնասիրողին հանգեցնելու էր միայն մեկ, գիտականորեն ճիշտ եզրակացության, այն է՝ ամասիացին դրանց մոտեցել է մանրախույզ ընտրությամբ ու քննադատորեն: Այսպես վարվելով էլ՝ նա լայնորեն օգտվել է Թեոփանես Միթիլենացու տեղեկություններից[55], որոնք ոչ մի կերպ «պատահական ինֆորմացիա» չի կարելի համարել: Հետևաբար, անտարակույս է, որ Ստրաբոնի (և մյուսների) հաղորդումների հիմքում ընկած են վստահելի ու արժանահավատ աղբյուրների տվյալներ, որոնց համաձայն էլ Աղվանքի հարավային սահմանն անցնում էր Կուր գետով:*

*Մերժելով անտիկ ու հայ հեղինակների հաղորդումների իսկությունը՝ Ֆ. Մամեդովան վկայակոչում է Մովսես Խորենացուն և Մովսես Կաղանկատվացուն, որոնք, նրա բնութագրմամբ, լավ ծանոթ լինելով Անդրկովկասի աշխարհագրությանը, Աղվանքի հարավային սահման մատնանշում են Արաքս գետը: Որպես ապացույց նա*

---

[50] *Նույն տեղում, էջ 120, 146:*

[51] *Նույն տեղում, էջ 120:*

[52] *Հ. Ս. Սվազյան. Ստրաբոնի աղբյուրները Աղվանքի մասին.– ՊԲՀ, 1978, -1, էջ 95–104:*

[53] Strabo, XI, I, 6.

[54] Ф. Мамедова. Политическая история …, с. 119.

[55] *Հ. Ս. Սվազյան. Ստրաբոնի աղբյուրները Աղվանքի մասին, էջ 95–104:*

*բերում է այն տեղեկությունները, որոնցում հայ պատմիչները խոսում են Հայոց Վաղարշակ թագավորի կողմից Առան նախնուն հյուսիսարևելյան կողմերում կուսակալ նշանակելու և նրան «ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ» տարածք հատկացնելու մասին[56]: Ոչ մի լուրջ հետազոտող չի տարակուսել և հիմա էլ չի տարակուսում, որ Խորենացու ու նրան հետևող Կաղանկատվացու հաղորդումները վերաբերում են Հայոց աշխարհում տեղի ունեցող վերափոխումներին և նրա հյուսիսարևելյան կողմերում հայկական մի նոր կուսակալություն հիմնելուն: Կուսակալություն, որին, պատմիչները աշխարհագրորեն անվանում են «Աղուանք»: Շահարկելով այս հանգամանքը և այն, որ հիշյալ պատմիչները վերջինիս հարավային սահման նշում են Արաքս գետը, Ֆ. Մամեդովան շտապում է օգտագործել դրանք և առաջ է քաշում իր տեսակետն այն մասին, թե Աղվանքի հարավային սահմանը հասել է մինչև Արաքս գետը: Բայց այստեղ նա ածպարարություն է անում, աչք փակելով այն փաստի վրա, որ պատմիչները խոսում են ավանդական Առանի տիրույթի մասին, որը, ըստ նույն պատմագիրների, ընկած էր Կուր և Արաքս գետերի միջև: Դրանում դժվար չէ համոզվել նրանց տեղեկությունների մի պարզ վերլուծությամբ: Հայ պատմիչների, նախկինում վկայակոչված հաղորդումներից մեզ արդեն հայտնի է, որ Առանի տիրույթը սկսվում էր Արաքս (Երասխ) գետից՝ «ի գետոյն Երասխայ», ինչը, փաստացի ցույց տալով նրա հարավային սահմանը, մատնանշում է, որ այն անցել է Արաքս գետով: Խորենացին Առանի մասին իր խոսքը սկսում է նախ ասելով, որ վերջինս իբրև ժառանգություն ստացել էր Կուրին համընթաց ձգվող տարածքը: «(Վաղարշակը.– Հ. Ս.),– գրում է պատմահայրը,– կարգէ կողմնակալութիւն …առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր» (ընդգծումը մերն է.– Հ. Ս.)[57]: Սրանից հետևում է, որ Առանի տիրույթը հանգում էր Կուր գետին, որն էլ այլ բան չի նշանակում, քան այն, որ վերջինս հանդիսանում էր նրա հյուսիսային եզրագիծը: Ուրեմն, Առանի տիրույթը, սկսվելով Արաքս գետից, հասնում էր մինչև Կուր գետ: Իսկ այստեղ արդեն, շատ բան պետք չէ հասկանալու համար, որ հիշյալ գետերն էլ համապատասխանաբար կազմում էին նրա հարավային և հյուսիսային սահմանները: Հետևաբար, Ֆ. Մամեդովայի անրջած «Աղվանքի» տարածքը չէր, որ հարավում հասել էր Արաքս գետին, այլ Առանի տիրույթի, որն «Աղուանք» կոչվելուց բացի, ուրիշ ոչ մի ընդհանրություն չուներ Կուրից հյուսիս տարածված երկրի հետ: Ուստի, հայ պատմիչների հաղորդումներն Առան նախնու տիրույթի սահմանների մասին, բոլորովին էլ այն կռվանները չեն, որ ներկայացնում է ադրբեջանցի հեղինակը որպես իր տեսակետն հաստատող վկայություններ:*

*Այսպիսով, որքան էլ հարևան երկրում խեղաթյուրեն պատմական փաստերը, դրանց կամայական մեկնաբանություններով փորձեն ցանկալին իրականության*

---

[56] *Խորենացի, էջ 113, Կաղանկատվացի, էջ 8:*

[57] *Խորենացի, էջ 113:*

*տեղ անցկացնել, այնուամենայնիվ, աղբյուրներն իրենց միահամուռ ու անաչառ հաղորդումներով անվերապահորեն ցույց են տալիս, որ Կուրն էր Բուն Աղվանքի հարավային սահմանը և, որ սահմանի իր այդ դերը այն պահպանել էր պետականության գոյության ողջ շրջանում՝ մ. թ. ա. I դարից մինչև մ. թ. V դարի կեսերը: Ահավասիկ, Մեծ Հայքից Կուրով սահմանազատված սույն երկիրն են «Ալբանիա» անվանակոչել հունահռոմեական հեղինակները և «Բուն Աղուանք»՝ հայ մատենագիրները:*

## ՈՒՏԻՔԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ V ԴԱՐԻ ԿԵՍԵՐԸ

*Վերը կատարած քննությամբ պարզելով, որ Աղվանքի ու Մեծ Հայքի միջև սահմանն անցնում էր Կուր գետով, այլևս տարակույս չի մնում, որ Կուրից հարավ ընկած շրջանները, որտեղ տարածվում էին Ուտիք և Արցախ նահանգները, կունենային միայն ու միայն հայկական պատկանելիություն: Սակայն ժամանակակից ադրբեջանական պատմագիտությունը հիշյալ մարզերը հայտարարում է աղվանական, իսկ դրանց հայ բնակչությանը՝ աղվանացիներ: Բայց թե որքանով է դա համապատասխանում պատմական իրականությանը, ցույց են տալիս խնդրո առարկա մարզերից յուրաքանչյուրի մասին առանձին-առանձին ներկայացվող մատենագիտական տվյալները:*

*ՈՒՏԻՔ: (Otena, Otene): Ըստ «Աշխարհացոյցի»՝ Մեծ Հայքի 12-րդ նահանգն էր, ընկած էր Արաքս գետից արևմուտք, Արցախի ու Կուր գետի միջև, և ուներ, ինչպես սկզբնաղբյուրն է նշում, «գաւառս եւթն», չնայած դատելով անվանապես թվարկումներից, դրանք ութն են: «Ուտի,– կարդում ենք սկզբնաղբյուրում,– առ մտից կայ Երասխայ ընդ մէջ Արցախայ եւ Կուր գետոյ. ունի գաւառս զոր Աղուանք ունին՝ եւթն. Արան–Ռոտ, Տոի, Ռոտ–պացեան, Աղուէ, Տուչքատակ, Գարդման, Շիկաշէն, Ուտի–Առանձնակում»[58]: Կենտրոնն էր Պարտավ քաղաքը՝ Ուտի–Առանձնակում: Նահանգը հարուստ էր ձիթենիներով, մերձարևադարձային պտուղներով և զանազան թռչնատեսակներով:*

*Ուտիքը, նշված գավառներով, մոտավորապես համապատասխանում է ներկայիս Ադրբեջանի Հանրապետության Ղազախի, Թոուզի, Շամխորի, Խանլարի, Կասում-Իսմայիլովի, Միր-Բաշիրի, Բարդայի, Եվլախի շրջաններին և Աղդամի, Շահումյանի ու Լ.Ղ.-ի Մարտակերտի շրջանի մի մասին:*

*Ուտիական ցեղերը մտնում էին Տայքից մինչև Սևանա լճի ավազան ու ավելի հեռու տարածված մեծ ցեղային միության մեջ, և արձանագրություններում նրանց հետ համատեղ հանդես գալիս «Եթիունե» անվամբ[59]:*

---

[58] *Աշխարհացոյց, էջ 33:*

[59] *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 42, ծանոթ. 2:*

*Ի մասնավորի Ուտիքը, որպես առանձին վարչական միավոր, աղբյուրներում հանդես է գալիս հինավուրց ժամանակներից և միշտ իբրև Հայաստանի մարզերից մեկը, որը նաև Բուն Աղվանքից սահմանազատվում էր Կուր գետով: Այդ մասին է, օրինակ, Ստրաբոնի վերոբերյալ հաղորդումը, ըստ որի՝ նրա Շակաշեն գավառը (ինչն ասել է թե ողջ նահանգը) սահմանակցում էր Կուրին և Աղվանքին[60]: Ուտիքի հայկական պատկանելության մասին Ստրաբոնն ունի այլ հաղորդումներ ևս[61], որոնցից մեկի համաձայն այն հայկական էր դեռևս վաղագույն դարերից և հանդիսանում էր Հայոց երկրի լավագույն մասը: «Սակերը,– գրում է հույն աշխարհագետը,– արշավանքներ էին կատարում: Նրանք նվաճում են Բակտրիան և տիրում Հայաստանի լավագույն հողին, որին իրենց անվամբ կոչեցին Շակաշեն»[62]: Սակերի (սկյութների) հիշյալ արշավանքները տեղի էին ունենում մ. թ. ա. VII դարում և «Աշխարհագրության» հեղինակը, իր երկում խոսելով այդ մասին, ակամայից արձանագրել է այն փաստը, որ սակերը նվաճում էին նշված դարից էլ առաջ Հայաստանի մաս կազմող Ուտիքը:*

*Ուտիքի և ուտեացիների (որպես Հայաստանի մարզերից մեկի և բնակիչների) մասին տվյալներ կան նմանապես մ. թ. II–III դդ. պատմիչ Ասինիոս Կվադրատոսի և Ստեփանոս Բուզանդացու (ապրել է V–VI դդ.) մոտ: «Կուր գետի շրջակայքում ապրում են Հայաստանի նշանակալից մասը կազմող օվարենիները (գուգարները.– Հ.* U.*) և օտիները (ուտեացիները.– Հ.* U.*),– գրում է Կվադրատոսը,–վերջիններիս համար հատկապես շեշտելով, որ նրանք «(ապրում են.– Հ.* U.*) Հայաստանում»[63]: «Օտիներն Հայաստանի մարզերից է»[64],– վկայակոչելով Կվադրատոսին՝ հաստատում է Բուզանդացին:*

*Ահա այսպես պարզ ու որոշակի անտիկ հեղինակները հավաստում են, որ Ուտիքը ոչ միայն Հայաստանի մարզերից էր, այլև՝ լավագույն հողերից:*

*Ուտիքի համար նույնպիսի վարչական կացություն են պատկերում նաև հայ պատմագիրները: Նրանցից Մովսես Խորենացին գրում է. «Լուր հասանէ առ Երուանդ* յՈւտիացւոց գաւառին*, եթե գումարեաց արքայն Պարսից (Սելևկիայի.– Հ.* U.*) զօրս բազումս ի ձեռն Սմբատայ, զի ի վերայ քո խաղացեալ ածցէ զմանուկն Արտաշէս ի թագաւորութիւն իւր» (ընդգծումը մերն է.– Հ.* U.*)[65]: Այստեղ խոսքը գնում է մ. թ. ա. III դարի վերջերին ծավալվող իրադարձությունների մասին, երբ այդ ժամանակ դեռևս սելևկյան զորավար Արտաշեսը Հայոց գահի համար կռիվ է սկսում մ. թ. ա. VI*

---

[60] S t r a b o, XI, XIV, 4.

[61] *Նույն տեղում, II, I, 14, XI, VII, 2:*

[62] *Նույն տեղում, XI, VIII, 4:*

[63] Известия древних писателей …, т. I, с. 271.

[64] *Նույն տեղում, էջ 270:*

[65] *Խ ո ր է ն ա ց ի, էջ 169:*

*դարից Հայաստանում թագավորող տան վերջին ներկայացուցիչ Երվանդի դեմ, և այդ լուրը թագավորը ստանում է Ուտիքում գտնվելու օրերին: Արդեն իսկ այս հանգամանքն անառարկելիորեն ցույց է տալիս, որ խնդրո առարկա նահանգը, VII դարից առաջ էլ Հայաստանի մարզերից էր, անփոփոխ կացությամբ շարունակում էր մնալ նաև Երվանդական Հայաստանի կազմում: Հայտնի է, որ Երվանդ–Արտաշեսյան հակամարտությունն ավարտվում է վերջինիս հաղթանակով, ինչի հետևանքով իշխող հարստության ողջ տարածքը, որ հյուսիս–արևելքում հասնում էր մինչև Կուր գետ[66], հաղթողի իրավունքով անցնում է նոր տիրակալին՝ Արտաշես Ա-ին: Դինաստիական փոփոխությունը Հայոց աշխարհում, սակայն, չի փոխում Ուտիքի կարգավիճակը: Ունենալով հայկական պատկանելիություն՝ այն Արտաշես Ա-ի օրոք էլ մնում է Հայոց կազմում և որպես միևնույն պետական կազմավորման մաս, ժառանգաբար փոխանցվում նրա սերունդներին: Դա ապացուցում են ինչպես անգիր (նյութական), այնպես էլ գրավոր աղբյուրները: Պեղումները Ուտիքի և Արցախի սահմանագլխին բացել են մի բնակավայր, որը տեղացիների կողմից կոչվում է «Թգրանակերտ» կամ «Թառնակերտ» անուններով: Սրանք, ըստ էության, «Տիգրանակերտ» անվան տեղական, բարբառային ձևերն են[67] և իրենցով հիշեցնում են Տիգրան Մեծին՝ իր քաղաքաշինական գործունեությամբ: Նույն կողմերում «Տիգրանակերտ», «Միւս Տիգրանակերտ» և «Տկռակերտ» անուններով քաղաք են հիշատակում պատմիչներ Մեբեռսն ու Կաղանկատվացին[68]: Դրանք շոշափելիորեն ամրապնդում են այն եզրակացությունը, որ հիշյալ բնակավայրը կառուցել է Հայոց արքա Մեծն Տիգրանը, և հիմք է տալիս պնդելու, որ Ուտիքն ու նրան հարակից տարածքները Արտաշես Ա-ից հետո, հայկական պետության հետ մեկտեղ, ժառանգաբար անցել են նրա թոռանը և նա էլ այստեղ, սեփական տերության բաղկացուցիչ մասում, իր անվամբ քաղաք–բնակավայրեր է կառուցել: Ավելի քան հավանական է կարծել, որ արքայից արքան, լինելով հեռատես պետական ու քաղաքական գործիչ, այդպիսի կառույցներով ստեղծում էր պաշտպանական ամրություններ՝ երկիրը հյուսիսային վաչկատուն ցեղերի ներխուժումներից ապահովելու նպատակով:*

*Հաջորդ դարերում՝ Արշակունիների թագավորության շրջանում (66–428 թթ.), Ուտիքը ևս մնում է Հայաստանի մարզերից մեկը: Դա երևում է Ագաթանգեղոսի մի հաղորդումից, որի համաձայն Պարսից արյաց արքա Արտաշիրը, Սասանյանների դինաստիական հակառակորդ Արշակունիներից վրեժ լուծելու սևեռուն մտայնութ-*

---

[66] *Գ. Տիրացյան. Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար).– ՊԲՀ, 1980, - 4, էջ 84–95:*

[67] *Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 135:*

[68] *Պատմութիւն Մեբէռսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 125, Կաղանկատվացի, էջ 300:*

*յամբ, վարձու մարդասպան է ուղարկում Հայաստան՝ Խոսրով Մեծին (Տրդատ Բ-ին, 216–252 թթ.– Հ. Ս.) սպանելու համար: Մարդասպանը՝ Անակ Պարթևը, գալով Հայաստան՝ մտնում է Ուտիք և անցնում նրա Խաղխաղ քաղաքը, ուր այդ ժամանակ գտնվում էր արքան: «Եկեալ (Անակը.– Հ. Ս.),– գրում է պատմիչը,– յանդիման եղն թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս յարքայութեանն Հայոց»[69]: Այն հանգամանքը, որ Անակը առաջադրանքը կատարելու համար գալիս է Ուտիքի Խաղխաղ քաղաքը, ուր իջևանել էր Տրդատ Մեծը, առանց այլևայլության, խոսում է հօգուտ նրա, որ մարզը III դարում էլ էր ընկած Հայոց արքաների տիրապետության սահմաններում և, ուրեմն, հայկական էր ինչպես զբաղեցրած տարածքով, այնպես էլ էթնիկական կազմով: Ասվածն ավելի համոզիչ է դառնում, երբ վերհիշում ենք փաստն առ այն, որ քաղաքը առհասարակ հանդիսանում էր «ձմերոցս յարքայութեանն Հայոց»: Եվ սրանք մատենագրորեն վավերացված միակ տվյալները չեն Ուտիքի քաղաքական կացության մասին: Ուխտանես եպիսկոպոսը (X դար), ով անդրադարձել է Գրիգոր Լուսավորչի կրոնական գործունեությանը, պատմում է, որ մեր առաջին վեհապետը Հայոց աշխարհի տարբեր վայրերում, այդ թվում՝ Ուտիքի Գարդման գավառում[70] եպիսկոպոսություններ է հաստատում, ինչը չէր լինի, եթե նահանգն ունենար այլ կարգավիճակ ու այլ էթնիկական կազմ:*

*Հայ մատենագրության մեջ ուղղակի տեղեկություններ էլ կան, որոնցում Ուտիքը և Աղվանքը հիշատակվում են կողք կողքի որպես միմյանցից առանձին երկրներ: Դա առավել ցայտուն երևում է Կաղանկատվացու մոտ: Ամփոփելով Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեությունը, պատմիչը գրում է. «Զգեր (Մեսրոպ Մաշտոցը.– Հ. Ս.) զքարոզութիւն աւետարանին* յաշխարհն Ուտիացւոց և Աղուանս, և Լփինս, և ի Կասպս, և մինչև ի դուռն Չողայ» *(ընդգծումը մերն է.– Հ. Ս.)[71]: Այստեղ, Ուտիքի առանձին հիշատակությունը Աղվանքից ու անդրկուրյան թվարկված երկրներից, մի նոր, լրացուցիչ հիմք է տալիս պնդելու, որ ադրբեջանցիների աչքադրած նահանգն իր քաղաքական կացությամբ ոչ մի կապ չուներ Բուն Աղվանքի հետ:*

*Ուտիքն ուներ էթնիկական մի կազմ, որին հայկական ավանդությունն անվանում է «ուտեացիներ» և որն էլ սերում է Հայկի սերունդ Առանից: «Ի սորայ (Առանայ.– Հ. Ս.) զաւակաց ասեն,– հաղորդում է Խորենացին,– սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնսն»[72]: Ուտիքի բնակչությունը սերել է Հայկի սերունդներից, այդ իսկ պատճառով էլ ավանդությունը*

---

[69] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Երևան, 1983, էջ 30:*

[70] *Ուխտանէս եպիսկոպոս. Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, հատուած Ա, էջ 100:*

[71] *Կաղանկատվացի, էջ 95:*

[72] *Խորենացի, էջ 113, Կաղանկատվացի, էջ 8:*

*նրանց վերագրում է հայկական ծագում, ինչը հերթական անգամ հաստատում է նաև նահանգի հայկականությունը:*

ԱՐՑԱԽ *(«Արձախ» տարընթերցումով): Ուտիքի վարչաքաղաքական կարգավիճակի պարզաբանումը, ըստ էության, լուծում է նաև Արցախի պատկանելության հարցը, քանի որ նրանից հարավ–արևմուտք գտնվող Արցախն այլ քաղաքական կարգավիճակ չէր կարող ունենալ: Այնուհանդերձ, փորձենք դրանում համոզվել նաև մատենագիտական տվյալներով: Ըստ այդ տվյալների Հայոց հին նահանգներից էր Արցախը, որն ընկած էր Սյունիքից արևելք՝ նրա անմիջական հարևանությամբ և տարածվում էր մինչև Ուտիք[73]: Հարավային սահմանն անցնում էր Արաքս գետով, իսկ հյուսիսայինը, անցնելով Լոփնաս (Աղստև) գետից այն կողմ, ձգվում էր մինչև վերջինիս Ոսկեպար (Ջողաս) վտակի ձախ ափը: Այս շրջանակներում պարփակված Արցախը, «Աշխարհացոյցի» վկայությամբ, Մեծ Հայքի տասներորդ նահանգն էր և ուներ տասներկու գավառ՝ Մյուս Հաբանդ, Վայկունիք, Բերդաձոր, Մեծ Իրան, Մեծ Կուանք, Հարձլանք, Մուխանք, Պիանք, Պարսկանք, Քուստի-Փառնես, Կողթ[74], և իր ընդգրկած տարածքներով համապատասխանում էր Ադրբեջանի Կեդաբեկի ու Դաշքեսանի շրջաններին, ԼՂՀ այժմյան ողջ տարածքին, Քարվաճառի (Քելբաջարի), Ջեբրայիլի շրջաններին, Ադդամի ու Շահումյանի՝ Ուտիքից դուրս մնացած մասերին, Ֆիզուլիի ու Կուբաթլիի մի մասին: Վերջինիս մնացած մասը Քաշաթաղի (Լաչինի) շրջանի հետ մտնում էր Սյունյաց նահանգի մեջ: Մասնավորապես, Լաչինը Սյունյաց աշխարհի Աղահեճք (Քաշաթաղ, Խոժոռաբերդ) գավառն էր: Արցախն աչքի էր ընկնում իր բուսական ու կենդանական հարուստ աշխարհով, օգտակար հանածոներով, խիտ անտառներով, փարթամ արոտավայրերով ու անմատչելի լեռներով: Ուներ հայ բնակչություն:*

*Հայոց այս նահանգն իր երկարատև գոյության ընթացքում պատմության մեջ հանդես է եկել աշխարհագրական տարբեր անուններով՝ Ուրտեխինի, Օրքիստենե, Արցախ (Արձախ), Փոքր Սյունիք, Ծավդեից աշխարհ, Խաչեն, Ղարաբաղ և այլն, ու այդ անուններով հյուսել իր դարավոր պատմությունը: Այն առաջին անգամ պատմության մեջ հիշատակվում է մ. թ. ա. VIII դարում բիայնական արքա Սարդուրե Բ-ի (764–735 թթ.)՝ Սևանայ լճի հարավային ափին՝ Ծովակ գյուղում թողած արձանագրության մեջ Ուրտեխե (kur Urtehe---) ձևով[75]: Անտիկ հեղինակներին Արցախն հայտ-*

---

[73] *Աշխարհացոյց, էջ 33:*

[74] *Նույն տեղում:*

[75] Г. А. Меликишвили. Урартские клинописные надписи. М., 1960, с. 310, № 161; *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 72: Որ «Ուրտեխեն» Արցախն է, ցույց է տվել նախ Գ. Ղափանցյանը (տե՛ս* Г. А. Капанцян. Chetto-Armeniaca. Ереван, 1931, с. 104*), ապա, լեզվական քննությամբ, հաստատել է ուրարտագետ Հովհ. Կարագյոզյանը [տե՛ս Յով.*

*նի էր «Օրքիստենե» անվամբ և հաստատապես տեղորոշվում էր Հայաստանում: «Փավենեն ևս Հայաստանի մարզերից է,– գրում է Ստրաբոնը,– և Կոմիսենեն և Օրքիստենեն, որ դուրս է բերում մեծաթիվ հեծելազոր»[76]: Ամասիացի հեղինակն այս փաստն արձանագրել է մ. թ. ա. I – մ. թ. I դդ. ընկած ժամանակամիջոցում, երբ Մեծ Հայքում թագավորում էր Արտաշեսյան հարստությունը: Հետևաբար, խնդրո առարկա նահանգը վերջիններիս տիրապետության շրջանում կազմում էր հայաշխարհի բաղկացուցիչ մասը: Նրա այդ կարգավիճակը, անշուշտ, գալիս էր խոր հնադարից, քանի որ Արտաշեսյաններն իրենց իշխանության տակ էին վերցրել Երվանդյան Հայաստանի ողջ տարածքը, ներառյալ՝ Արցախը: Տեղին է կրկնել՝ այս կողմերում է Տիգրան Մեծն իր անունով քաղաք կառուցել ու դրանով մեկ անգամ ևս փաստել տվյալ շրջանների պատկանելիությունը Հայաստանին:*

*Արշակունի հարստության տիրապետության շրջանում Արցախն ընդարձակ ու հզոր մի իշխանություն էր, որի կենտրոնը Ծոդքն էր («Ջաւդէքը», «Սոդքը»), և դրա համար կրում էր «Ծաւդէացւոց» անունը: Այն ձևավորած ծավդեացիները ևս, ըստ ավանդության, սերում էին Հայկի սերունդ Առանից[77] և, ուրեմն, ունեին հայկական ծագում:*

*IV դարում Արցախ աշխարհում ծավալվում են իրադարձություններ, որոնք ցույց են տալիս Արցախի հայկականությունն ու, որպես այդպիսին, կապը հայ իրականության հետ: Այդպիսիներից է եկեղեցիների կառուցումը, որը 301 թ. հետո իրականացնում էր Գրիգոր Լուսավորիչը բովանդակ Հայաստանում: Եվ նա, իր այս սրբամատույց գործունեության ժամանակ Արցախը չտարանջատելով մայր երկրից, նրա Մյուս Հաբանդ գավառի Ամարաս գյուղում ևս եկեղեցի է հիմնարկում, ուր, ավելի ուշ, ամփոփվում է Վատնյան դաշտում (Մազքթաց աշխարհ) բարբարոսների կողմից սպանված Մանուկ Գրիգորիսի դին[78], իսկ տարիներ անց Հայոց Մեծերից Սբ. Մեսրոպ Մաշտոցը նույն եկեղեցու կամարների ներքո դպրոց է բացում: Փավստոս Բուզանդը, Մանուկ Գրիգորիսի մասին խոսելիս, հընթացս նշում է, որ Հաբանդը Հայաստանի գավառներից է և գտնվում է Հայոց աշխարհի «Աղուանք» կոչվող մասում: Նրա փոխանցմամբ, Մանուկ Գրիգորիսի հոշոտված մարմինը վերցրին «որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, և բերին ի գաւառս իւրեանց, ի կողմանն Աղուանից ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեօղն՝ որ անուանեալ կոչի Ամարազ: Եւ եդին զնա առ եկեղեցեաւն, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգո-*

---

*Կարագեոզեան. Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ հարակից նահանգներում, Երևան, 1998, էջ 184]:*

[76] S t r a b o, XI, IV, 6.

[77] *Խ ո ր է ն ա ց ի, էջ 113, Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 8:*

[78] *Բ ո ւ զ ա ն դ, էջ 26:*

*րիսի՝ քահանապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին»*[79]*: Նկարագրված դեպքերի մասին պատմում է նաև Խորենացին, բայց այն տարբերությամբ, որ Արցախն անվանում է Փոքր Սյունիք: «Սպանին զերանելին (պատանի Գրիգորիսին – Հ. Ս.),– գրում է պատմահայրը,– ընթադրեալ ձիովք բարբարոսքն ի Վատնեան դաշտին, մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով: Զոր բարձեալ սարկաւագայ նորին, բերելով ի փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի»*[80]*:*

*Արցախի հիշատակությունը Փոքր Սյունիք անվամբ այն վաղեմի ժամանակների արձագանքն է, երբ երկրամասը Սյունիքի հետ կազմում էր մի ընդհանուր տարածք՝ Սիսական աշխարհի տարածքը, որը Հայկի սերունդներից Սիսակ նահապետի տիրույթն էր և անվիճելիորեն մտնում էր Մեծ Հայքի վարչական սահմանների մեջ: Հետագայում, Վաղարշակ Հայոց թագավորի բարեփոխումների հետևանքով, դրանք առանձնանում են և սկսում հանդես գալ զատ-զատ՝ իբրև ինքնուրույն վարչական միավորներ*[81]*:*

*Բուզանդի վկայությունը, թե Արցախի Մյուս Հաբանդ գավառը գտնվում էր Հայաստանում, տրամաբանորեն էլ է հավաստում, որ ողջ Արցախը (Խրենացու Փոքր Սյունիքը) Հայոց նահանգներից էր նաև 4-րդ հարյուրամյակում: Ավելին, ինչպես տեսանք վերը Բուզանդից քաղված հատվածից, այն այդպիսին է եղել և նախորդ դարերում*[82]*:*

*Եկեղեցու հիմնարկումն Արցախում, ապա և Մանուկ Գրիգորիսի մասունքների ամփոփումն ու դպրոցի բացումը, Արցախը վերածում են Հայոց Հյուսիս Արևելից կողմանց համար կրոնական ու դպրության կարևոր կենտրոնատեղի ու համայն հայության հոգևոր-մշակութային օջախներից մեկի:*

*Հայ մատենագրության մեջ առկա տվյալների համաձայն V դարի կեսերից Արցախը գտնվում էր Հայաստանի կազմում: Այսպես, ըստ Վարդանաց պատմիչ Եղիշեի, Վասակ Սյունեցին 451 թ. ապստամբության նախօրեին, պատերազմից ետ կանգնելու առաջարկով նամակներ է հղում «ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն, և ի Կորդիսն,* յԱրցախ և յԱղուանս, *ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց» (ընդգծումը մերն է.– Հ. Ս.)*[83]*: Ուշագրավը Եղիշեի սույն հաղորդման մեջ ոչ միայն այն*

---

[79] *Նույն տեղում:*

[80] *Խ ո ր ե ն ա ց ի, էջ 259–260:*

[81] *Մանրամասները տե՛ս Հ. Ս. Ս վ ա զ յ ա ն. Խորենացիական ավանդազրույցի Սիսակ-Առանյան ճյուղը և նրա պատմական ատաղձը.– Շուշին Հայոց քաղաքակրթության կենտրոն (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր), Երևան, 2007, էջ 5–19:*

[82] *Բ ո ւ զ ա ն դ, էջ 320–322:*

[83] *Ե ղ ի շ է. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին (այսուհետև՝ Ե ղ ի շ է), Երևան, 1989, էջ 190:*

*է, որ դրանով հաստատվում է Արցախի՝ Հայաստանի կազմում լինելու փաստը V դարում, այլև, որ Արցախն ու Աղվանքը հիշատակվում են առանձին–առանձին, իբրև միմյանցից կատարելապես տարբեր երկրներ և դրանով հաստատում, որ խնդրո առարկա նահանգը Բուն Աղվանքի կազմում չէր նաև V դարի առաջին կեսում:*

*Այսպիսով, աղբյուրների հավաստմամբ, Ուտիք և Արցախ նահանգները հնագույն ժամանակներից մինչև V դարի կեսերը եղել են Հայոց անքակտելի մարզերը և իրենց ուրույն պատմությունն են հյուսել մայր երկրում տեղի ունեցող իրադարձություններին բերած գործուն մասնակցությամբ:*

## ՈՒՏԻՔՆ ՈՒ ԱՐՑԱԽԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Ուտիքն ու Արցախը մշտապես եղել են մայր երկրում ծավալվող իրադարձությունների մասնակիցներ: Հայ մատենագիտությանը հայտնի տվյալների համաձայն, դրանք այդ դերով հանդես են եկել հնագույն ժամանակներից՝ իրենց հարաբերությունները երկրի թագավորական իշխանությունների հետ կառուցելով: Դրա մի ցայտուն օրինակ պահպանվել է ժողովրդական զրույցներում: Դրանցից մեկի համաձայն՝ Վարդգես անունով, անշուշտ, հզոր ու ազդեցիկ մի այր, «Մանուկ» մականունով, Տուհաց գավառից խնամախոսության է գալիս Երվանդ Ա Սակավակյացի (մ. թ. ա. VI դարի կես) մոտ, խնդրում նրա քրոջ ձեռքը, ամուսնանում և Քասախ գետի շրջակայքում ավան հիմնում ու իր անունով կոչում «Վարդգեսավան»: Խորենացու փոխանցմամբ՝ «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, զԱրտմէդ քաղաքաւ, զՔասախ գետով, կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի»: Այս Երուանդ առաջինն է սակաւակեացն, որ «ի Հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի՝ շինեաց զաւանս»[84]: Ավելի ուշ այս «աւանն Վարդգէսի, որ ի վերայ Քասախ գետոյ»[85], ընդարձակում, շենացնում ու պարսպապատելով Հայոց մայրաքաղաք է հռչակում արքա Վաղարշ Ա-ն (117–140 թ.) և վերանվանում Վաղարշապատ, «որ և Նոր քաղաք»[86]: Զրույցում հիշատակվող վայրը, որտեղից եկել էր Վարդգես Մանուկը, Ուտիքի Տուչքատակ գավառն էր՝ նրա «Տուս-Քուստակ»[87] տարընթերցման «Տուս» կամ «Տուք» բաղադրիչը տրված բացառական*

---

[84] *Խորենացի, էջ 199: Զրույցի պարփակ վերլուծությունը տե՛ս Մանուկ Աբեղյան. Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 126–130:*

[85] *Խորենացի, էջ 199:*

[86] *Նույն տեղում, էջ 200:*

[87] *«Քուստակը» պահլավերեն բառ է և նշանակում է «գավառ»: Այստեղից էլ «Տուս-Քուստակը» նույնն է, թե «Տուս-գավառ»: Հավանական է, վերջինս IX դարում վերածվել է գյուղի, որովհետև Հովհ. Դրասխանակերտցին այն որպես գյուղ է հիշատակում: «(Բուզանդ – Հ. Ս.),– գրում է նա,– չուեալ յՈւտի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս, յորում և նոնանուանձին»*

*հոլովով՝ «ի Տուհաց-գաւառէն»: Ուրեմն խոսքն այստեղ Ուտիքին է վերաբերում, որից էլ հետևում է, որ Վարդգես Մանուկի վեպն իր պատմական ատաղձով ցույց է տալիս, որ նահանգը յուր մարդկանցով դեռ վաղ ժամանակներից է մասնակցել Մեծ Հայքի հասարակական կյանքում տեղի ունեցող անցուդարձներին:*

*Նույնը կարելի է ասել և Արցախի մասին: Ստրաբոնի վկայությամբ՝ Հայաստանը հարուստ էր ձիաբուծման համար պիտանի արոտավայրերով և այդտեղ բուծում էին Նեսայական տեսակի արագավազ ու դիմացկուն ձիեր, որոնցից իբրև հարկ Հայաստանի սատրապը ամեն տարի՝ Միհր աստծուն նվիրված տոհմախմբությունների ժամանակ, 20 հազար մտրուկ էր ուղարկում Պարսից արյաց արքային[88]: Զուգադրելով սույն վկայությունը վերը բերված այն տեղեկության հետ, թե Օրքիստենե–Արցախը դուրս էր բերում մեծաքանակ հեծելազոր, կարելի է վստահորեն ասել, որ Արցախը եղել է երկրի ձիաբուծման կենտրոններից մեկը և Պարսկաստանին տրվող տվյալ հարկատեսակի հիմնական մասն արտահանվել է այդտեղից: Հասկանալի է, որ, ունենալով նման պարտավորվածություն, Արցախն իր մասնակցությունն էր բերում երկրի ներքին և արտաքին գործերին: Առաջ անցնելով՝ բերենք դա հաստատող նոր օրինակներ: Այսպես, Ագաթանգեղոսի տեղեկացմամբ, երբ Գրիգոր Լուսավորչին Կեսարիա էին ուղարկում Հայոց կաթողիկոս ձեռնադրելու, նրան ուղեկցողների թվում էին նաև հիշյալ իշխանությունների տոհմապետերը: «Յայնժամ թագաւորն (Տրդատ Գ-ն – Հ. Ս.),– գրում է Հայոց դարձի պատմության հեղինակը,– վաղվաղակի փութով և երկիւղիւ և մեծաւ խնդութեամբ հոգացեալ, գումարեաց զզլխաւորս նախարարացն և զկուսակալն աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղ տան, … մետասաներորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին, երկոտասաներորդ՝ իշխանն Ծաւդէից (Արցախի – Հ. Ս.) աշխարհին, երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին և առաքեաց զնոսա…ի քաղաքն Կեսարացւոյ…զի տարեալ զԳրիգորն՝ քահանապետ կացուցեն իւրեանց աշխարհին»[89]: Ի դեպ, նույն Ագաթանգեղոսի բնորոշմամբ, սրանք «Թորգոմայ տան» ընտիր իշխաններն էին, կուսակալներ, կողմնակալներ, հազարավոր և բյուրավոր զորքերի տերեր[90]: Որոշ ժամանակ անց նույն դերում տեսնում ենք Ուտիքի Գարդման գավառի իշխանին, որն այս անգամ, դարձյալ կաթողիկոս ձեռնադրելու նպատակով, Կեսարիա էր ուղեկցում մեկ այլ հոգևորականի՝ Շահակին[91]: Ուտիքի և Արցախի իշխանների հիշատակությունը Հայոց աշխարհի «ընտիրների» շարքում և նրանց ընդգրկումը երկրի համար շրջադարձային ելումուտերին, պարզո-*

---

*[տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի), Երևան, 1996, էջ 130]:*

[88] S t r a b o, XI, XIV, 9.

[89] *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, էջ 446:*

[90] *Նույն տեղում:*

[91] *Բ ո ւ զ ա ն դ, էջ 72:*

*ռոշ վկայում են խնդրո առարկա նահանգների հզորության, բարձր դիրքի ու երկրում խմորվող հարաբերություններում ունեցած նրանց գործուն դերի մասին:*

*Ուտիքի և Արցախի մասնակցությունը Մայր երկրի ներքին ու արտաքին հարաբերություններին նշվածներով չեն սահմանափակվում: Մի շարք այլ իշխանությունների հետ Ուտիքի ու Արցախի նախարարություններին էր վստահված Հայոց աշխարհի հյուսիսային դռան պահպանության գործը, որը կովկասյան լեռնանցքներից ելնող վտանգի՝ հյուսիսային քոչվոր ցեղերի անընդհատ ասպատակությունների հետևանքով, ուժերի մշտական լարում և աչալրջություն էր պահանջում: Նրանց այդ պարտականությունը վավերացված է «Զորանամակ» կոչվող հատուկ փաստաթղթում, որը ցույց է տալիս նաև այն զինվորների քանակությունը, որոնցով նրանք իրականացնելու էին իրենց առջև դրված խնդիրը: Ըստ փաստաթղթի, որում, ի դեպ, Ուտիքի ու Արցախի հետ միևնույն խմբում հիշատակվում է և Գարդմանը (որը Ուտիքի գավառներից մեկն էր), նրանցից յուրաքանչյուրը հիշյալ նպատակի համար, իր տրամադրության տակ ունեցել է հազարական զինվոր[92]: Ավելացնենք, որ Ուտիքն ու Արցախը հայ նախարարների համակարգում և Հայոց արքունիքում ունեցած իրենց պատվաստիճանով ու տեղով, համապատասխանաբար, գրավում էին 23-րդ և 28-րդ տեղերը 70 նախարարական տների միջև: Իշխաններին այդ տեղերում է դասել արքունիքում «Հայոց ազատաց եւ տանուտէրանց» դիրքը, բարձը ցույց տվող փաստաթուղթը, որ հայտնի է «Գահնամակ» անունով[93]:*

*Արցախն իր աշխարհագրական դիրքով, թանձրախիտ անտառներով ու բարձրաբերձ լեռներով հայերի համար ծառայել է նաև որպես բնական պատսպարան: Պատմիչ Եղիշեի վկայությամբ՝ Ավարայրի ճակատամարտից հետո (451 թ.) ապստամբներից շատերը ապաստան են գտնում Արցախում և այնտեղից անընդհատ բանագնացներ ուղարկում հոների մոտ՝ Սասանյան Իրանի դեմ հանելու և ապստամբության կրակը կրկին վառելու համար[94]:*

*Հայության հասարակական կյանքում Ուտիքի ու Արցախի ունեցած մասնակցության մասին՝ Ուտիքի օրինակով, մատնացույց է անում Կորյունը: Խոսելով երկրի ծայրամասերում դպրություն տարածելուն ուղղված Մեսրոպ Մաշտոցի ջանքերի շուրջ՝ նա հայտնում է, որ ուսուցչապետն իր աստվածաշնորհ առաքելությունն իրականացնելիս, ամենագործնական աջակցությունն է ստացել Գարդմանի, որ նույնն է, թե Ուտիքի իշխան Խուրսից[95]: Մի ուրիշ՝ Խոսրով անվամբ, Գարդմանի իշխանի մասին էլ պատմում է Խորենացին: Նրա հաղորդմամբ՝ վերջինս, մասնակցելով պալա-*

---

[92] Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 251–252.

[93] *Նույն տեղում, էջ 249–250: Այս փաստաթղթում Ուտիքը ներկայացված է «Գարդման», իսկ Արցախը՝ «Միւնեաց երկրորդն» անուններով:*

[94] *Ե ղ ի շ է, էջ 256:*

[95] *Կ ո ր յ ո ւ ն. Վարք Մաշտոցի (այսուհետև՝ Կ ո ր յ ո ւ ն), Երևան, 2005, էջ 74:*

*տական մի խնջույքի, բոլորի աչքի առաջ սիրահետում է արքունի քնարահարուհուն և, ի պատասխան այդ տարիներին Հայաստանում թագավորող պարսիկ Շապուհի (415–419 թթ.)՝ նրան ձերբակալելու հրամանին, հպարտորեն, ձեռքը սրին, դուրս է գալիս պալատից և ոչ ոք չի համարձակվում արգելել նրան*[96]*:*

*Այսպիսով, անտիկ, հին ու վաղ միջնադարյան հայկական աղբյուրները Ուտիքին և Արցախին վերաբերող իրենց թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի տվյալներով ցույց են տալիս, որ հիշյալ նահանգները, լինելով Հայոց աշխարհի մարզեր, հեռու կանգնած չեն եղել երկրի հասարակական ու քաղաքական կյանքից և գործնականորեն մասնակցել են նրա ներքին ու արտաքին հարաբերություններին:*

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

*Ուտիք և Արցախ նահանգները հայկական էին ոչ միայն քաղաքական կացությամբ, այլև իրենց հայ բնակչությամբ: Մարդիկ այստեղ բնակվել են խոր հնադարից: Դրա վկայությունը ոչ միայն ԼՂՀ-ի Հադրութի շրջանում (պատմական Արցախի Մյուս Հաբանդ գավառում) Դրախտիկ և Ազոխ գյուղերի միջև ընկած Որվան կոչվող քարանձավից հայտնաբերված պալեոլիթյան մարդու գոյությունն ապացուցող հետքերն են (աշխատանքային գործիքներ, արտադրական թափոններ, ընտանի կենդանիների ու թռչունների ոսկորների մնացորդներ և այլն), այլև, որ ավելի արտահայտիչ է, նեանդերթալյան մարդու լավ պահպանված ծնոտը: Արդեն իսկ այս հանգամանքը ինքնին վկայում է այն մասին, որ Ուտիք-Արցախում մարդիկ ապրել են վաղեմի ժամանակներից և անընդմեջ:*

*Հայ տարրը երկրամասում մշտապես մեծամասնություն է կազմել ու դրանով դյուրացրել ժողովուրդ ձևավորելու և էթնիկական ընդհանրության հասնելու գործընթացը, որն արդեն մ. թ. ա. II դարում եղելություն էր: Դա վկայում է Ստրաբոնը՝ գրելով, որ Հայոց թագավոր Արտաշես Ա-ի ժամանակներում (189–160 թթ.) Հայաստանում «բոլորը միալեզու են»*[97]*: Որ նշված ժամանակաշրջանում տեղի բնակիչները հայեր էին և խոսում էին հայերեն, ցույց է տալիս Հայոց Վաղարշակ թագավորի պետական–շինարարական գործունեությունը: Պատմությունից հայտնի է, որ նա Հայաստանի հյուսիսարևելյան կողմերում նախարարություններ էր հիմնում և կուսակալներ նշանակում ըստ հայերեն խոսակցության վերջի սահմանների «զեզերք հայկական խօսիցս»*[98]*: Հետևաբար, այդ սկզբունքով նշված կողմերում հիմնադրված կուսակալությունների բնիկները հայեր էին և, բնական է, խոսել են հայերեն: Ասվածն ապացուցվում է նաև տվյալ վայրերում Մեսրոպ Մաշտոցի կողմից դպրոցներ բացե-*

[96] *Խորենացի, էջ 331–332:*

[97] Strabo, XI, XIV, 5.

[98] *Խորենացի, էջ 112–113:*

*լու, հայ գիրը տարածելու և, առհասարակ, նրա կրթական–լուսավորչական գործունեությամբ[99], որը մեծ հայը կարող էր ծավալել միայն հայերեն խոսող բնակչության միջավայրում:*

*Վերը նշվեց, որ Հայոց առաջին քահանայապետը եկեղեցիներ է կառուցել և Գարդման (Ուտիք) ու Ամարաս (Արցախ) գավառներում: Այս հանգամանքը անվերապահորեն հաստատելով, որ նշված վայրերի բնակչությունը հայեր էին, ցույց է տալիս նաև, որ նրանք ևս 301 թ. ողջ հայ ժողովրդի հետ քրիստոնեությունն ընդունել են իբրև պաշտոնական կրոն և սկսել են հանդես գալ իբրև Հայաստաննեայց Առաքելական եկեղեցու դավանանքի հետևորդներ: Դա նշում է և IX–X դդ Հայոց կաթողիկոս ու պատմիչ Հովհ. Դրասխանակերտցին: Նա, որ արաբների տիրապետության շրջանում ապրել է անդաստական կյանքով և թափառել տեղից-տեղ, հանգրվան է գտնում Հայոց Արևելից կողմերում, քանզի տեղի բնակչությունը, ինչպես ինքն է ասում, «ի ժողովրդենէն մերմէ և խաշն արօտի մերոյ էին»[100], այսինքն հայեր էին և հայ միաբնակ եկեղեցու հետևորդներ:*

*Երկրամասը հայերով բնակեցված լինելու մասին վկայում են նաև օտարազգի հեղինակները: Նրանցից է XIII դարի պարսիկ մի անանուն հեղինակ, որն իր ժամանակաշրջանի Արցախը (որն արդեն հանդես էր գալիս «Խաչեն» անվամբ) նկարագրելիս գրում է. «(Խաչենը.– Հ. Ս.) մի դժվարամատչելի մարզ է սարերի ու անտառների մեջ, գտնվում է Առանում (Հայոց Արևելից կողմերում.– Հ. Ս.): (Նրա բնակիչները) հայեր են: .. նրանց կառավարչին թագավոր են անվանում…: Ունեն ուժեղ ամրոց»[101]:*

*Արցախ–Խաչենի բնակչությունը հայեր լինելով, պարզ է, խոսում էին հայերեն: Ըստ միջնադարյան հայ քերականների, Հայոց Արևելից կողմերում խոսել են հայերենի այն բարբառով, որը կոչվել է «արցախյան»: Այդ քերականներից Ստեփանոս Սյունեցին (VII–VIII դդ.), խորհուրդ տալով ապագա լեզվաբաններին չսահմանափակվել լոկ երկրի կենտրոնական շրջաններում գործածվող լեզվի իմացությամբ, այլ հայերենում հմտանալու համար ուսումնասիրել նրա բարբառները, գրում է. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառսն զեզերական որպէս զԿորճայն եւ զՏայեցին եւ զԽութայինն եւ զՉորրորդ Տայեցին եւ զՍպերացին եւ զԱիսնին ու զԱրցախայինն, այլ մի միայն զմիջերկրայսն և զոստանիկսն վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան»[102]: Անդրադառնալով Ստեփանոս Սյունեցու խորհրդին՝ միջնադարյան մի ուրիշ հայ քերական, Գլաձորի համալսարանի ռաբունապետ Եսայի Նչեցին*

---

[99] *Կորյուն, էջ 74, Խորենացի, էջ 328–329, Կաղանկատվացի, էջ 95:*

[100] *Դրասխանակերտցի, էջ 220:*

[101] Аджа Иб Ад-Дунаи. Чудеса мира. Критический текст, перевод с персидского, введение, комментарий и указатели Л. П. Смирновой. М., 1993, с. 199.

[102] *Ն. Ադոնց. Ստեփանոս Սյունցւոյ մեկնութիւն քերականին (Արուեստ Դիոնեսեայ Քերականին եւ հայ մեկնութիւնք նորա).– Երկեր, հ. Գ, Երևան, 2008, էջ 187:*

*հատուկ ընդգծում է, որ Սյունեցու թվարկած բարբառները Հայոց լեզվինն են և հավաստիացնում է, որ իր նախորդը ոչ թե «զաւտարազգի ասէ, այլ զիւրոյ զլեզուինն զխաւսս»[103]: Ուստի, պարզից էլ պարզ է, որ Ստեփանոս Սյունեցին խոսում է ողջ Հայոց աշխարհում՝ թե՛ միջերկրակայքում ու ոստանիկ ավաններում, և թե՛ ծայրագավառներում գործածվող ու բոլորի համար ընդունելի մի լեզվի մասին, որն էր հայերենը, այդ ընթացքում արցախյան բարբառը դիտելով նրա «եզերային» տարատեսակը և, այդպիսով, լիակատար հիմք տալով պնդելու, որ Արցախն ու Ուտիքը Հայոց հին նահանգներից էին և բնակեցված էին հայերենի տեղական բարբառով խոսող հայերով:*

*Ելնելով երկրամասին տրվող «Առան» անունից՝ հայոց լեզվի այդ բարբառը արաբները կոչել են «առաներեն»[104]: Ըստ լեզվաբանական քննությունների, Արցախ–դարաբաղյան բարբառն ունեցել է աշխարհագրական լայն տարածում: Դրանով խոսել են ոչ միայն ողջ Հայոց Արևելից կողմանց, այլև նրա սահմաններից դուրս գտնվող բնակչությունը[105]:*

*Հայոց Արևելից կողմանց բնակչության էթնիկական պատկանելիության ու լեզվի մասին իրական պատկերացում են տալիս տարածաշրջանով մեկ սփռված եկեղեցական շինությունների, ճարտարապետական տարբեր կոթողների ու տապանաքարերի վրա դրոշմված հազարավոր հայերեն արձանագրությունները[106]: Դրանք իրենց հայատառ գրերով, լեզվով ու ժամանակագրական տվյալներով անվերապահորեն ցույց են տալիս, որ այդտեղ ապրել է բնիկ մի ժողովուրդ, որը գրել և խոսել է բնաշխարհիկ իր մայրենիով՝ հայերենի ուրույն բարբառով:*

*Տարածաշրջանում բնակվում էին նաև այլ էթնիկական տարրեր, որոնք, սակայն, կազմում էին տեղի բնակչության ընդծված փոքրամասնությունը և վճռական դեր չէին կատարում երկրամասի կյանքում:*

*Այսպիսով, Ուտիքն ու Արցախը Հայոց հինավուրց նահանգներից էին, գործնականորեն մասնակցում էին մայր երկրում ծավալվող իրադարձություններին և ունեին հայ բնակչություն, որը խոսում էր հայերենի արցախյան բարբառով, իսկ հայոց դարձի ժամանակ, իբրև նրա մի հատված, ընդունել էր քրիստոնեություն, ինչն էլ համայն հայության հետ շարունակում է դավանել մինչ օրս:*

*V դարի կեսերին տարածաշրջանում տեղի են ունենում իրադարձություններ, որոնք, ձևափոխելով անդրկովկասյան երկրների աշխարհագրական պատկերը, փոխում էին նաև հիշյալ նահանգների վարչաքաղաքական կացությունը:*

---

[103] *Ե ս ա յ ի Ն չ ե ց ի. Վերլուծութիւն քերականական, աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1999, էջ 65:*

[104] СМОМПК, вып. 29, с. 29; вып. 38, с. 12.

[105] *Ավելի հանգամանալից տե՛ս Բ. Ա. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 54–107:*

[106] *Դ ի վ ա ն հայ վիմագրության, պր. V, 348 էջ:*

## ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԱՂՎԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

*V դարում Անդրկովկասում արդեն գերիշխում էր Սասանյան Իրանը, որի տիրապետության շրջանը ծանր ու մղձավանջային տարիներ էին տեղի ժողովուրդների համար: Նախարարները, ինչպես և ողջ ազնվականական դասը, զրկվում են իրենց իրավունքներից, ծայր են առնում կրոնական հալածանքները, որոնց հաջորդում է հավատափոխության պահանջը: Տարեցտարի ավելանում են հարկերը, իսկ հարկահանությունն իրականացվում է կամայականորեն ու բռնի միջոցներով: Ստեղծված տարտամ վիճակը խոր դժգոհությունների տեղիք է տալիս և հպատակ ժողովուրդներին հանում Պարսից տերության դեմ: 450–451 թթ. ոտքի են ելնում հայերը՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ: Չնայած ապստամբությունը ազատություն չի բերում, բայց անկախության շունչ ու ոգի է հաղորդում Պարսկաստանին ենթակա ազատաբաղձ զանգվածներին: Հայերի օրինակին շուտով հետևում են և աղվանացիները: Նրանք իրենց Վաչե Բ թագավորի գլխավորությամբ, օգտվելով Հազկերտ Բ-ից հետո վերջինիս որդիների միջև ծագած գահակալական կռիվներով զբաղված լինելուց, սկիզբ են դնում հակասասանյան մի շարժման, որն արդեն Պերոզ արյաց արքայի օրոք (459–484 թթ.) վերածվում է զինված պայքարի և երկու տարի շարունակ (460–461 թթ.) տագնապի մեջ պահում աշխարհակալ Իրանին: Նման քաղաքական ալեկոծ պայմաններում իրենց տիրապետությունը Մեծ Հայքում, Աղվանքում և Վիրքում պահպանելու նպատակով՝ Սասանյանները դիմում են զանազան միջոցների, որոնցից մեկն էլ թագավորական իշխանությունների վերացումն ու մարզպանների գլխավորությամբ կառավարման նոր՝ մարզպանական համակարգի հաստատումն էր տեղերում: Նրանք ունեին մարզպանություններ կազմավորելու իրենց սկզբունքը: Համաձայն VI դարի ասորի պատմիչ Մշիխա Զեխայի՝ «Արևելքի բոլոր թագավորներին հաղթելով փոխարենը (պարսիկները) իրենց ենթակա կառավարիչներ ու մարզպաններ էին նշանակել»[107]: Նույնը, Վիրքի օրինակով, հաստատում է և բյուզանդացի պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին (VI դար): «Այն ժամանակ, երբ,– գրում է նա,– բարբարոսների (իբերների.– Հ. Ս.) մեծամեծները թագավոր Գուրգենի հետ միասին որոշեցին ապստամբություն բարձրացնել… պարսիկները թույլ չէին տալիս, որ իրենց թագավոր կարգեն»[108]: Ինչպես երևում է մեջբերումներից, պարսիկ քաղաքա-*

---

[107] *Մշիխա Զեխա. Ադիաբենի եկեղեցու պատմություն.– Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 8, Ասորական աղբյուրներ, Ա, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթ. Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 84:*

[108] *Պրոկոպիոս Կեսարացի. Պատերազմների մասին.– Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 154:*

*գետներն իրենց գերիշխանության տակ գտնվող երկրներում մարզպանություններ ձևավորելիս, նախ, հեռացնում էին երկրի թագավորին, վերացնում թագավորական իշխանությունը, և ապա միայն մարզպաններ նշանակում: Եվ դա պատահական չէր արվում. թագավորների ու թագավորական իշխանությունների առկայությունը ցանկացած երկրում մշտ էլ առաջացնում էր անկախության և ինքնուրույնության զգացողություններ ու անկայուն դարձնում ամեն մի օտար տիրապետություն: Այդ երևույթի վտանգավորության գիտակցությամբ էլ, Սասանյաններն այդպես էին վարվում հպատակ բոլոր երկրների հետ: Բացառություն չէր կարող կազմել և Աղվանքը: Ուստի, ճնշելով ապստամբությունն այստեղ ու այլևս վստահ չլինելով թե այն չի կրկնվի, նրանք 461 թ. գահից հեռացնում են թագավոր Վաչե Բ-ին և երկիրը վերածում մարզպանության՝ պարսիկ մարզպանի գլխավորությամբ:*

*Մարզպանությունների ստեղծումն ընթանում էր ոչ միայն թագավորական իշխանությունների վերացումներով, այլև ուղեկցվում էր տարածքային փոփոխություններով: Եվ Սասանյանները, որոնց խնդիրների մեջ մտնում էր նաև Հայաստան աշխարհի թուլացումը, վերջինից կտրում են նրա եզերական նահանգներ Ուտիքն ու Արցախն իրենց՝ համապատասխանաբար ութ և տասներկու գավառներով և բռնակցում նորաստեղծ Աղվանից մարզպանությանը[109]: Որ հայկական այդ նահանգները «հանվել» (բռնազավթվել, բռնագրավվել) էին Հայաստանից և միացվել նորաստեղծ վարչաքաղաքական միավորին, վկայում է «Աշխարհացոյց»-ի հեղինակը: Արձանագրելով, որ Արցախն ու Ուտիքը Հայոց 10-րդ և 12-րդ նահանգներն էին և անուն առ անուն թվարկելով դրանց գավառները, հայ աշխարհագետն ընդգծում է, որ «զայս ամենայն (գաւառք – Հ. Ս.) Աղուանք ունին «հանեալ ի Հայոց»[110]: Նույնն ավելի ընդարձակ ձևով ներկայացված է հիշյալ երկի մի այլ հրատարակությունում. «(Աղվանքի գավառներն են.– Հ. Ս.),– կարդում ենք այստեղ,– Եխնի, Բեխ … և այլ գաւառս զորս ի Հայոց հանեալ է. Շիկաշէն, Գարդման, Կողթ, Զաւէ և այլ քսան գաւառս մինչև զիսառնումն Երասխայ ի Կուր գետ»[111]:*

*Շարունակելով Անդրկովկասում ամուր հաստատվելուն ուղղված քաղաքականությունը՝ Սասանյաններն ի դեմս Կավատ Ա-ի (488–531 թթ.) և նրա որդու՝ Խոսրով Անուշիրվանի (531–578 թթ.), նվաճումների են դուրս գալիս Կասպից ծովի արևմտյան ափագծի երկայնությամբ ու իրենց ենթարկում Խսրվան, Շրվան, Ղեկաց (Լեկաց), Չողայ, Թավասպարաց և այլ ազգագավառներ, դեպի հյուսիս շարժվելուն զուգընթաց կառուցելով նաև պաշտպանական պարիսպներ: Գրավված երկրները*

---

[109] *Հայաստանը թուլացնելու նպատակով Սասանյանները նրանից անջատում են նաև Փայտակարանն ու Գուգարքը և բռնակցում, համապատասխանաբար, Ատրպատականին ու Իբերիային (տե՛ս Աշխարհացոյց, էջ 33, 34–35):*

[110] *Աշխարհացոյց, էջ 33:*

[111] *Մատենագրութիւնք, էջ 606:*

*նվաճողները միացնում էին Աղվանից մարզպանությանը՝ վերջինիս սահմանը հյուսիսում հասցնելով մինչև Դերբենդ:*

*Ավարտուն և վերջնական տեսք ստացած Աղվանից մարզպանությունն ընդգրկում էր «Բուն Աղուանք» աշխարհը, Հայաստանից անջատված հայկական նահանգներ Ուտիքն ու Արցախը և Կասպից ծովի արևմտյան ափին ընկած վերոհիշյալ ազգագավառները: Նրա սահմաններն արևմուտքում ու արևելքում մնալով համապատասխանաբար Ալազան գետն ու Կասպից ծովը, հյուսիսում, տարածքային այս ընդարձակումների հետևանքով, հասնում են մինչև Դերբենդ, իսկ հարավում՝ Արաքս գետ: Մայրաքաղաքը դառնում է Պարտավը, որն այդ նպատակի համար վերակառուցվում է Պերոզ արքայի կողմից և վերանվանվում Պերոզկավատ[112]: Այստեղ էին նստում Աղվանքի մարզպանները:*

*Վարչաքաղաքական նոր կազմավորումն իր ամենամեծ միավորի անվամբ կոչվում է «Աղուանք», որն այս պարագայում ձեռք է բերում այլ իմաստ ու բովանդակություն: Այժմ այն իրենով սկսում է արտացոլել ոչ միայն հունա–հռոմեական հեղինակների ճանաչած «Ալբանիա–Բուն Աղուանք» երկիրը, այլև մարզպանության կազմում ընդգրկված երկրամասերը, այդ թվում՝ Ուտիքն ու Արցախը, նրանց բոլորի համար դառնալով մեկ ընդհանուր հավաքական տեղանուն: Այսպես, պատմության մեջ առաջին անգամ Հայոց նահանգներն ստանում են «Աղուանք» անվանումը և այսուհետ ծավալվող իրադարձությունների բովում երևում այդ անվամբ:*

*Այսպիսով, V դարի կեսերին, վերը նշած քաղաքական հանգամանքներով պայմանավորված, բռնակցվելով Աղվանքին, փոխվում է Ուտիքի ու Արցախի վարչաքաղաքական կացությունը և, ընդգրկվելով Աղվանից մարզպանության կազմում, համապատասխանաբար կրում «Աղուանք» անունը: Սա առիթ է ծառայում նաև, որ Հայոց Արևելից կողմանց եկեղեցին նույնպես կոչվի «Աղվանից» և դառնա նրա թեմերից մեկը: Բայց «Աղուանք» եզրույթը նրանց համար սոսկ անվանական էր: Բացի տեղանունից, նրանք ոչ մի ընդհանուր կապ չունեին մարզպանության մյուս բաղադրիչների հետ և ավելի շուտ հանդես էին գալիս իբրև ինքնուրույն միավորներ, քան որոշակի կազմավորման մեջ մտնող երկրամասեր:*

*Նշված իրավիճակն Ուտիքի ու Արցախի համար երկար չի պահպանվում. այն մնում է մինչև Աղվանից մարզպանության տրոհումն ու տարածաշրջանում այլազան նոր միավորումների առաջացումը, որից հետո վերականգնում են Հայոց ավատատիրական–իշխանական համակարգում ունեցած իրենց նախկին վարչաքաղաքական կացությունը և իրենց գոյատևումը շարունակում նրանց հետ կողք կողքի:*

## ԱՂՎԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՈՒՄԸ ԵՎ «ԱՂՈՒԱՆՔ» ՏԵՂԱՆՎԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

[112] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 42:*

*V դարի վերջերից պատմության ասպարեզում հայտնվում են խազարները և ցեղակից հոների ու մյուս հյուսիսային ցեղերի հետ իրենց արշավանքներով սպառնալիք դառնում Սասանյան Իրանի և Բյուզանդական կայսրության համար: Նրանց դեմն առնելու ու իրենց երկրների անվտանգությունն ապահովելու նպատակով՝ հիշյալ տերությունները ձեռնարկում են կտրուկ միջոցներ, որոնց մեջ կողմերն առանձնակի կարևորություն էին տալիս Կասպից ծովի և Կովկասյան լեռների միջև ընկած բաց տարածություններում ամրությունների կառուցմանը: Առաջին պատնեշը, որ բարձրանում է այդ խոցելի տեղերում Ապգուտ–Կավատ անունով հայտնի պարիսպն էր, որ կառուցում է Կավատ արքան (488–531 թթ.): Նրա գործը շարունակում է որդին՝ Խոսրով Ա Անուշիրվանը (531–573 թթ.): Վերջինիս լայն թափով ծավալած շինարարական աշխատանքների շարքում յուրահատուկ տեղ ունեն Դերբենդի (Բաբ–ուլ–Աբվաբի) զարմանահրաշ պարիսպները: Այսպիսի վիթխարի կառույցների իրականացման համար անհրաժեշտ բանվորական ուժն ու նյութական միջոցները «խոսրովները» (այդպես էին սասանյաններին կոչում արաբները) վերցնում էին իրենց հպատակներից: Մտցվում է հարկային նոր համակարգ.– աշխատապարհակը դառնում է գլխավոր հարկերից մեկը: Ազգությամբ, լեզվով, կրոնով ու կենցաղով միմյանցից բոլորովին տարբեր մարդանց մեծ խմբերով տեղամասեր են քշում: Բացի այդ, ամրությունների պահպանման համար հայր ու որդի արքաները դրանց շուրջ կառուցում են ռազմական ավաններ և այդտեղ զինվորներ տեղակայում իրենց ընտանիքներով: Աղբյուրների հավաստմամբ, տվյալ հարցում նրանք գերապատվությունը տալիս էին «սիյասիջիներից» (սյունեցիներից) կազմված զորախմբերին: Այս ամենի համար պահանջվող պետական ծախսերը թեթևացնելու նպատակով, մասնավորապես, Խոսրով Ա-ն տեղական իշխաններից ու ցեղային առաջնորդներից ընտրում է հուսալի մարդկանց, նրանց որոշակի տարածքներ հատկացնում, շնորհում շահական տիտղոսներ, օժտում լայն արտոնություններով ու հանձնարարում սեփական միջոցներով պաշտպանել իրենց վստահված տիրույթների անվտանգությունը, ընդ որում՝ պայմանավորվելով չմիջամտել նրանց գործերին: «Ընտրում էր Անուշիրվանը,– գրում է արաբ պատմիչ Բալաձորին,– թագավորներ և նրանցից յուրաքանչյուրին շնորհելով շահական իրավունք՝ նշանակում էր մարզերի վրա: Դրանցից էին լեռների Խաքանը, այսինքն Սերիրի (գահի) տիրակալը, Վահրարզանշահ տիտղոսով և Գիլանի թագավորը, ինքը՝ Գիլանշահը և Թաբարսարան շահը և ալ–Լակզերի թագավորը՝ Գուրջանշահ տիտղոսով և Մասքութների թագավորը, որի թագավորությունն այժմ գոյություն չունի և Լիրանի թագավորը՝ Լիրանշահ տիտղոսով և Շիրվանի թագավորը Շիրվանշահ անվամբ»[113]: Պարսից արքաների այս միջոցառում-*

[113] Б а л а д з о р и. Книга завоевания стран, пер. П. К. Жузе. Баку, 1927, с. 7.

*ների ու դրանց անցկացման նպատակների մասին խոսում են նաև ալ–Իստահրին ու Մասուդին[114]:*

*Խոսրով Ա-ի նման քաղաքականությունը մարզպանության Կուրից հյուսիս տարածված շրջաններում հանգեցնում է նրան, որ այդ մասն աստիճանաբար մասնատվում է առանձին մանր վարչական միավորների, որոնք սկսում են հանդես գալ ինքնուրույն և իրենց աշխարհագրական վայրի, ցեղի, սեփական առաջնորդների ու իշխանների անուններով: Այսպես, առաջանում են Թաբարսարան, Գիլան, Լիրան, Լակզ, Շիրվան, Շաքի և այլ անուններով նոր վարչական միավորներ: Դառնալով ինքնիշխան՝ դրանք ժամանակի ընթացքում այնքան են հզորանում, որ այստեղ նվաճումների ելած արաբ զորավարները հարկադրված էին նրանց հետ առանձին–առանձին հաշտություն կնքել: Բալաձորիի վկայությամբ՝ արաբ զորավար Սալման Իբն Ռաբիան, իսկ որոշ ժամանակ անց էլ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը հարկեր վճարելու պայմանով հաշտություն են կնքում վերոհիշյալ բոլորի և նրանցից բացի Կապաղակի, Կամբեճանի, Շապորանի[115] տերերի, Խայզանի[116] ու Դերբենդի բնակիչների հետ[117]:*

*Մարզպանության հյուսիսային մասի քաղաքական մասնատվածությանը նպաստում էին նաև երկրի մակերևույթի կտրտվածությունն ու բաժանվածությունը տնտեսական տարբեր շրջանների, էթնիկական կազմի բազմազանությունն ու միմյանց հետ հաղորդակցվելու դժվարությունները, միասնական լեզվի բացակայությունն ու այլ գործոններ: Նույն ժամանակաշրջանում Աղվանից մարզպանության հարավային մասում՝ Կուրի աջափնյակում, հայկական Առանշահիկ տոհմի գլխավորությամբ իրենց ինքնուրույն իշխանությունն են կազմում Ուտիքն ու Արցախը: Պատմականորեն առաջացած նման իրավիճակում, երբ մարզպանության նախկին բաղադրիչները հանդես են գալիս նոր անվանումներով, «Աղուանք» տեղանունն այլևս դադարում է նրանց համար ընդհանուր, հավաքական եզրույթ լինելուց և դառնում է միանգամայն ավելորդ: Սակայն չի վերանում. այն շարունակվում է շրջանառվել պատմության մեջ, սակայն աշխարհագրական այլ տարածքի համար և դրան հնագույն բովանդակությամբ: «Աղուանք» եզրույթի գործածության նոր ոլորտը՝ համապատասխան իմաստային փոփոխությամբ, պարզորոշ արտացոլված է Մովսես Խորենացու ու Մովսես Կաղանկատվացու երկերում՝ նրանց բերած ավանդության Սիսակ-Առանյան ճյուղում, որն արդեն հայտնի է այդ կապակցությամբ արված մեր անդրադար-*

---

[114] СМОМПК, вып. 29, с. 15; вып. 38, с. 41.

[115] *Քաղաք Կասպից ծովի արևելյան ափին՝ Շրվան ազգագավառում, այժմ՝ Շաբրան գյուղը (տե՛ս U. S. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 73 և կից քարտեզը):*

[116] *Ամրոց Խսրվան ազգագավառում՝ վերջինիս կենտրոնը (տե՛ս նույն տեղում, էջ 55 և կից քարտեզը):*

[117] Б а л а д з о р и. *Նշվ. աշխ., էջ 14, 17:*

*ձումներից[118]: Այստեղ նշենք միայն, որ այն «Աղուանքը», որի մասին նրանք խոսում են, տարածվում էր «առ մեծ գետովն, որ անուանի Կուր» և «ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն, որ ասի Հնարակերտ»[119]: Հետևաբար, սրանք էլ կազմում էին մեր պատմիչների ճանաչած «Աղվանքի» սահմանները, որոնք, ավելի հստակ ձևակերպմամբ, անցնում էին հյուսիսում՝ Կուր գետով, հյուսիսարևմուտքում՝ Հնարակերտ ամրոցով, իսկ հարավարևելքում՝ Արաքս գետով: Նրա չորրորդ՝ արևմտյան կողմը եզրափակվում էր Սյունիքն ու Արցախը միմյանցից բաժանող Արցախյան, Սևանի ու Մուրղուզի (Միափորի) լեռներով: Ըստ նույն հեղինակների՝ այն բնակեցված էր Հայկի սերունդ Առանից սերված, ուրեմն և հայկական ծագմամբ, ցեղերով՝ արդեն հիշատակված ուտեացիներով, գարդմանացիներով, ծավդեացիներով ու գարգարացիներով[120]: Այս դիտարկումներից հետևում է, որ սույն Աղվանից աշխարհը թե՛ իր աշխարհագրական սահմաններով, և թե՛ էթնիկական կազմով կատարելապես տարբերվում է Կուր և Կովկասյան լեռների միջև ընկած 26՝ մինչև այսօր էլ անհայտ մնացած ծագմամբ ցեղերով բնակեցված Բուն Աղվանք-Ալբանիայից: Իսկ նման հետևությունից բխում է մի այնպիսի իրական եզրակացություն, որ պատմության ասպարեզում ի հայտ է եկել «Աղուանք» անվամբ մի նոր երկիր, որը, դատելով նրա համար վերը մատնանշած սահմաններից, գտնվել է Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքում: Բայց հայտնի է նաև, որ հիշյալ տարածքը դարեր ի վեր զբաղեցնում էին հայկական Ուտիք և Արցախ նահանգները: Ուստի, այս երկու իրողությունները միմյանց հետ համադրելով, կարող ենք լիակատար հիմքով անվարան պնդել, որ նորահայտ «Աղուանքը» պարփակում էր Ուտիքն ու Արցախը, նրանց միացյալ տարածքը՝ հայ բնակչությամբ: Ուրեմն, ինչպես պարզվում է, Աղվանից մարզպանության տրոհումից հետո «Աղուանք» տեղանունը մնում ու ամրապնդվում է Հայոց հինավուրց նահանգների վրա և դրանք էլ, այսուհետ, սկսում են հանդես գալ այդ անվամբ:*

*«Աղուանք» անվանումը պատահականորեն չի մնում ու հաստատվում Ուտիքի և Արցախի վրա: Նրանք այդ անունը նախ կրում էին՝ լինելով Աղվանից մարզպանության մարզեր, և հետո՝ մարզպանությունը կազմող իրենց հարևանների համեմատությամբ ավելի կազմակերպված էին, տնտեսապես զարգացած, ունեին միատարր հայ բնակչություն, սեփական գիր ու այդ գրով ստեղծված բարձրարժեք հոգևոր մշակույթ, կառավարվում էին յուրային իշխանների կողմից և օժտված էին հասարակականորեն կենարար այնպիսի որակներով, որոնք զերծ են պահում նրանց Կուրի ձախափնյակում տեղի ունեցող վերաձևավորումներից ու փոխակերպումներից: Նշված առանձնահատկությունների շնորհիվ նրանք պահպանում են իրենց ինքնությունը,*

---

[118] *Տե՛ս նույն տեղում, էջ 1, 11–12:*

[119] *Խորենացի, էջ 113, Կաղանկատվացի, էջ 8:*

[120] *Խորենացի, էջ 133, Կաղանկատվացի, էջ 8:*

*մարզպանության մասնատումից հետո Առանշահիկների գլխավորությամբ դառնում ինքնուրույն և վերստին համալրում ավատատիրական Հայաստանի նախարարական տների շարքը: Այսուհանդերձ, նրանք վերապրուկային ձևով շարունակում են կրել իրենց համար արդեն սովորական դարձած «Աղուանք» տեղանունը, ինչն էլ հերթական անգամ փոխելով իր իմաստը, այս պարագայում մատնանշում է Հայոց աշխարհի եզերական նահանգներ Ուտիքն ու Արցախը: Մեր մատենագիրներն էլ՝ Խորենացուց սկսած, «Աղուանք» ասելով հասկացել են Ուտիքի ու Արցախի տարածքը և այս կողմերում ծավալվող իրադարձությունները ներակացրել են «Աղուանք» եզրույթի տակ[121]: Նրանցից առանձնանում է Մատթեոս Ուռհայեցին (XI–XII դդ.), ով առանց այլևայլության, ուղղակի գրում է՝ «յաշխարհն Աղուանից, որ ասի խորին աշխարհ Հայոց»[122]: Առկա իրողությամբ պայմանավորված՝ հայ պատմագիտական գրականության մեջ մեկը մյուսի ետևից ի հայտ են գալիս «Աղուանք Հայոց» և «Աղուանից Հայք» հասկացությունները[123], որոնք, ըստ էության, դառնում են «Հայոց Հյուսիս Արևելից կողմանք», «Կողմն Արևելից», «Խորին աշխարհ Հայոց» և «Խորին Հայք» անվանումներին հոմանիշ եզրույթներ:*

*Այսպիսով, «Աղուանք» տեղանունը ծագել է Հայոց Արևելից կողմերում, հայերեն «աղու» (քաղցր, դուրեկան) բառի հիմքի վրա և բնութագրելով երկիրն ամբողջությամբ՝ իբրև արգասաբեր բնաշխարհ, էթնիկական ծագում չունի: Անհայտ են մնում նրա բնակչության էթնիկական ծագման ու ինքնանվանման խնդիրները: Ուստի, իրական կլինի նրանց համար գործածել «աղվանացիներ» ձևը՝ որպես տվյալ անվամբ երկրի բնակիչներ:*

*«Աղուանք» տեղանունը միշտ չէ, որ արտացոլել է միևնույն տարածաշրջանը: Այստեղ պարբերաբար տեղի ունեցող վարչական ու քաղաքական փոփոխությունների հետ այն փոխել է նաև իր բովանդակությունն ու ամեն անգամ ցույց տվել այն վարչաքաղաքական նոր կազմավորումը, որն առաջացել էր դրանց հետևանքով: Աղվանից աշխարհի պատմության մեջ նկատվում է այդպիսի երեք ժամանակաշրջան. 1. պետականության կամ թագավորության շրջան (մ. թ. ա. I – մ. թ. V դարի կես), երբ երկիրը ճանաչված էր «Բուն Աղուանք», լատինական հնչողությամբ՝ «Ալբանիա» անվամբ, 2. մարզպանական շրջան (V դարի երկրորդ կես – VI դարի վերջ), երբ երկրում հաստատվում է կառավարման մարզպանական համակարգով և նրան են բռնակց-*

---

[121] *Դա ավելի ցայտուն երևում է Մովսես Կաղանկատվացու մոտ (տե՛ս Հ. Ս. Սվազյան. «Աղուանից աշխարհ» հասկացությունը ըստ Մովսես Կաղանկատվացու.– «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, № 1, էջ 225, 234):*

[122] *Մատթէոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն, Երևան, 1991, էջ 246:*

[123] *Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, Յօրինեալ ի հայր Միքայել վարդապետէ Չամչեանց, հ. Գ, Երևան, 1984, էջ 131 (նոր էջակալումով), Ստ. Կանայեանց. Անհայտ գավառներ հին Հայաստանի, Վաղարշապատ, 1914, էջ 146–147:*

*վում Հայոց՝ Ուտիք ու Արցախ նահանգները և Կասպից ծովի արևմտյան ափին ընկած ազգագավառները՝ բոլորի համար ընդհանուր «Աղուանք» անունով, 3. ետմարզպանական շրջան (VI դարի վերջերից), երբ մարզպանության տրոհումից հետո այստեղ բարձրացել էին նոր, ինքնուրույն իշխանություններ, իսկ «Աղուանք» տեղանունն իր տեղը զիջել էր այդ նորերին տրվող Շիրվան, Շաքի, Դերբենտ և այլ մանր միավորումների անվանումներին ու ամփոփվել Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքի շրջանակներում: Հետևաբար, տեղին ու պատմականորեն ճիշտ կլինի, մեզ հետաքրքրող սույն երկրի պատմության ուսումնասիրությունը կիրարկել համաձայն այդ ժամանակահատվածների իրենց համապատասխան պատմական ընթացքով: Ինչ վերաբերում է Հայոց աշխարհի «Աղուանք» կոչվող հատվածին, ապա այն լինելով Ուտիքի ու Արցախի տարածքը, ուսումնասիրվելու է հայ ժողովրդի ընդհանուր պատմության ենթատեքստում, քանի որ հիշյալ նահանգները հայկական էին ասպարեզում հայտնվելուց ի վեր և այդպիսիք էլ մնում են մինչ օրս՝ ժամանակի փորձություններին դեմ հանդիման:*

## ОСНОВЫ ИЗУЧЕНИЯ ИСТОРИИ СТРАНЫ АЛУАНК

ГЕНРИК СВАЗЯН

Резюме

В начале I в. до н. э. по соседству с Великой Арменией возникло государство Алуанк. Этот термин произошел в восточных краях Армении, на основе чисто армянского слова «алу» («сладкий», «благоприятный») и означал «благодатная страна». Возникнув как название страны, расположенной между Курой и Кавказскими горами, термин «Алуанк» («Албания») не всегда отражал собой одну и ту же территорию. С I в до н. э. до середины V в. термин «Алуанк–Албания» отражал территорию Собственно Алуанка, с середины отмеченного века до конца VI в. – марзпанства, с конца VI в.–территорию армянских областей Утик и Арцах, которые, будучи частями марзпанства, также носили общее для нового административно-политического образования название Алуанк. Следовательно, при изучении истории страны Алуанк–Албании должны рассматриваться три периода: 1. период государственности (I в. до н. э. до половины V в.), 2. период марзпанства (со второй половины V в.–до конца VI в.) и 3. постмарзпанский период, когда интересующий нас термин употреблялся для армянских областей Арцах и Утик.

# THE BASIS OF RESEARCH OF THE HISTORY OF AGUANK

HENRIK SVAZYAN

Summary

At the beginning of the 1st century B.C. in the neighborhood of Great Hayq (Armenia) a state was formed which was named "Aguank".This term was formed in Eastern Armenia, from Armenian words "agu", "alu", ("sweet"), which meant "fertile land". Emerging as a name of a country, situated between the Kura river and Caucasian mountains, the term "Aguank" ("Albania") didn't always mean the same region. From the 1st century B.C. till the middle of the 5th century the term "Aguank-Albania" reflected the territory of Aguank Proper, from the middle of the mentioned century till the end of the 6th century – the Marzpan system, from the end of the 6th century – the territory of Armenian provinces Utik and Artsakh – which, being parts of the Marzpan system, also had the name Aguank for the new administrative-political formation. So, in the history of Aguank three periods must be considered:1. the period of statehood (from the 1st century B.C. till the middle of the 5th century); 2. the Marzpan period (from the second half of the 5th century till the end of the 6th century); and 3. the post-Marzpan period, when the name was used for Armenian provinces Artsakh and Utik.